

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բնական գիտությունների ֆակուլտետ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 061101.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Ինֆորմատիկայի բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2026/30
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները
Ծրագրի դիմորդը պետք է ունենա. - միջնակարգ կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթություն, - ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները
Ծրագրի նպատակն է. - ձևավորել անհրաժեշտ գիտակրթական հենք և մասնագիտական ներուժ Հայաստանի Հանրապետությունում ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի զարգացման համար, - պատրաստել ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառի մասնագետներ նախագծային, արտադրա-տեխնոլոգիական, գիտական և գիտահետազոտական, կազմակերպչական և կառավարման գործունեության համար, որոնք ունակ կլինեն. - համադրելու հիմնարար և կիրառական մաթեմատիկայի գիտելիքները տարբեր համակարգերի մոդելավորման, տեղեկատվությունների որոնման, տվյալների հենքերի ստեղծման, պահպանման և օգտագործման նպատակով, - աշխատելու գիտական և գիտաարդյունաբերական բնագավառներում, - կատարելու տարբեր ոլորտներում հետազոտությունների արդյունքների և գործընթացների արդյունավետության վերլուծություն: Ծրագրի հիմնական խնդիրներն են. - ապահովել մաթեմատիկական մոդելների և մեթոդների, ալգորիթմների, ծրագրային ապահովման նախագծման և թեստավորման մեթոդների հետազոտում և մշակում, գիտական տեխնոլոգիաների և ծրագրային փաթեթների օգտագործում կիրառական խնդիրների լուծման համար, - ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրույթների, նախագծման, վերլուծության և մշակման հիմնարար սկզբունքների ու մեթոդների յուրացումը և ձևավորել գործնական կիրառման կարողություններ, - ձևավորել գրավոր, բանավոր և գրաֆիկական հաղորդակցության ու թիմային աշխատանքի կարողություններ, - նախապատրաստել շրջանավարտներին բազմաբնույթ մասնագիտական կարիերայի ու աշխատատեղերի, ինչպես նաև շարունակական մասնագիտական կատարելագործման համար, - ստեղծել անհրաժեշտ կրթական նախադրյալներ ծրագրի շրջանավարտների կրթությունը մագիստրոսի ու հետազոտողի ծրագրերով ուսումնառությունը շարունակելու համար:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. Բնութագրելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակոդմնորոշված և համակարգային ծրագրավորում) ու ծրագրային ճարտարապետությունների հիմնական սկզբունքները:

Ա2. Դասակարգելու ծրագրավորման արդի միջավայրերը, բացատրելու դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, տարբեր խնդիրների լուծման համար ընտրելու համապատասխան լեզու՝ ներառյալ վեբ, համակարգային և արհեստական բանականության/մեքենայական ուսուցման (AI/ML) լուծումները:

Ա3. Մեկնաբանելու մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության հիմնական տեսությունները, մեթոդները և մոտեցումները, ինչպես նաև տվյալագիտության և մեքենայական ուսուցման հիմնարար մոդելների կիրառման սկզբունքները տնտեսական, գիտական և ինժեներական խնդիրների ոլորտներում:

Ա4. Ներկայացնելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմնական հասկացությունները, խնդիրները, մեթոդները և մոդելները, ինչպես նաև բնութագրելու դրանց կիրառման հնարավորությունները գործնական խնդիրների լուծման գործընթացում՝ ներառյալ լեզվային մոդելների և խելացի համակարգերի օգտագործումը:

Ա5. Բացատրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և ցանցային ճարտարապետությունների կառուցվածքային ու գործառնական սկզբունքները, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության հիմնարար հասկացությունները և, դրանց դերը բարձր արդյունավետության հաշվարկային ու արհեստական բանականության (AI) համակարգերում:

Ա6. Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի կառուցման ու գործարկման հիմնարար սկզբունքները, CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաների հիմնական հասկացություններն ու ճարտարապետական մոտեցումները, ինչպես նաև ծրագրային համակարգերի մշակման կենսացիկլի և ծրագրային արտադրանքների շուկայական գնահատման հիմնական մեթոդներն ու ցուցանիշները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. Կիրառելու դասական մաթեմատիկայի, վիճակագրության և օպտիմալացման մեթոդները մասնագիտական խնդիրների լուծման համար, իրականացնելու անընդհատ և դիսկրետ մոդելների վերլուծություն, մշակելու արդյունավետ ալգորիթմներ և գնահատելու ծրագրային լուծումների որակը:

Բ2. Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ:

Բ3. Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոդելներ՝ իրական տվյալների հիման վրա կանխատեսումներ և վերլուծություններ կատարելու, ծրագրային համակարգեր մշակելու համար:

Բ4. Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր:

Բ5. Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետության, տեղեկատվական անվտանգության, կրիպտոգրաֆիայի և ժամանակակից կլիբերանվտանգային տեխնոլոգիաների սկզբունքները և մեթոդները:

Բ6. Նախագծելու, մշակելու և ներդնելու ժամանակակից ծրագրային համակարգեր՝ կիրառելով DevOps, CI/CD, ամպային (AI/LLM) և ավտոմատացված տեխնոլոգիաներ, ապահովելով համակարգերի հուսալիությունը, մասշտաբայնությունը և արդյունավետությունը:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ,

աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:

Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Ռեֆերատ
- Էսսե
- Թղթապանակ
- Մասնագիտական գրականության վերլուծություն
- Խմբային աշխատանքի ներկայացում
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Ձեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Բանավոր հարցում
- Ստուգողական աշխատանք
- Ընթացիկ քննություններ
- Ստուգարքներ
- Եզրափակիչ քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաբնույթ ոլորտներում գործող պետական և մասնավոր հիմնարկներում, կազմակերպություններում և ձեռնարկություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Գիտահետազոտական ինստիտուտներում՝

- գիտաշխատող,
- ինժեներ-մաթեմատիկոս,
- ինժեներ-ծրագրավորող,

Պետական և մասնավոր հիմնարկներում՝

- ինժեներ-մաթեմատիկոս,
- ինժեներ-ծրագրավորող,
- տեղեկատվական բազաներ ստեղծող և սպասարկող մասնագետ,

- վիճակագրական վերլուծությունների մասնագետ,
- արտադրանքի վերահսկման բաժինների ծրագրային մասնագետ
- և այլն:

Լրացուցիչ մանկավարժական դասընթացներ անցնելուց հետո ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նաև ՀՀ ԿԳՆ ալվագ, հիմնական և միջին դպրոցներում որպես ուսուցիչ, ուսումնականության ինժեներական լաբորատորիաներում որպես դասընթացավար:

Հնարավոր աշխատավայրերն են. ՀՀ ԿԳՆ դպրոցներ, քոլեջներ, բուհեր, գիտահետազոտական ինստիտուտներ, ՊՆ հատուկ ստորաբաժանումներ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող բազմաբնույթ կազմակերպություններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագիրն իրականացնելու համար ֆակուլտետում առկա են 9 լսարաններ, որոնցից մեկը հազեցված է տեխնիկական միջոցներով՝ համակարգիչ և տեսասարք, երկու համակարգչային սրահներ՝ յուրաքանչյուրը հազեցած 20 համակարգիչներով և տեսասարքերով, միկրոկոնտրոլերների ծրագրավորման լաբորատորիա, թվային անվտանգության աշխատանոց: Մասնաձյուղում հասանելի է ինտերնետ կապը՝ էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

1. ԵՊՀ, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր
2. ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակ
3. ՌԴ, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր
4. ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի տեղեկատվական տեխնոլոգիաների, մեխանիկայի և օպտիկայի հետազոտական համալսարան (Университет ИТМО), բակալավրի պատրաստման ուսումնական պլաններ, «Մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա», «Ռոբոտատեխնիկա» կրթական ծրագրեր, 2020թ.
5. ՌԴ, Պետական համալսարան-ուսումնագիտարտադրական կոմպլեքս, «Մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա» կրթական ծրագիր
6. Jacobs University, Computer Science, Study Program Handbook, 2021
7. OWASP - OWASP Application Security Verification Standard
8. University of Washington - Master of Science in Cybersecurity Engineering

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Մասնաձյուղում իրականացվող «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողներն ուսումնասիրելու են նաև ժամանակակից և պահանջված ծրագրավորման տարբեր լեզուներ, համակարգեր, տեխնոլոգիաներ և տեսություններ, մասնավորապես C# և Java լեզուները, զուգահեռ ծրագրավորման MPI տեխնոլոգիան, Web-ծրագրավորում, կոմպյուտերային ցանցեր, կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական հիմունքներ, միկրոկոնտրոլերների ծրագրավորում, տեղեկատվական անվտանգություն և այլն: Ուսումնառության ընթացքում ուսանողը կկատարի հետազոտական աշխատանք մասնագիտական մի շարք առարկաների շրջանակում: Բուհում ստացած կրթությունը թույլ կտա ծրագրի շրջանավարտներին լինել տեղեկացված համակարգչային գիտության ժամանակակից ուղղությունների և զարգացման միտումների վերաբերյալ, կողմնորոշվել ապագա կարիերայի հարցերում և լինել մրցունակ և պահանջված ազգային և տարածաշրջանային աշխատաշուկայում:

18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,

- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

Հետազոտական

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդներ

Հաղորդակցման

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցներ, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

S2S կիրառության

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու e-learning հարթակը՝ դասապրոցներ իրականացնելու համար
- ուսումնական գործընթացում կիրառելու ԱԲ գործիքները:

2. Մասնագիտական կարողություններ

Դասավանդողը պետք է ունակ լինի.

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական գործունեություն

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն (ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար):
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:

Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:

- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն (ցանկալի է):

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և խմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Բնութագրելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակոդմոորոշված և համակարգային ծրագրավորում) ու ծրագրային ճարտարապետությունների հիմնական սկզբունքները:	Բ1	Կիրառելու դասական մաթեմատիկայի, վիճակագրության և օպտիմալացման մեթոդները մասնագիտական խնդիրների լուծման համար, իրականացնելու անընդհատ և դիսկրետ մոդելների վերլուծություն, մշակելու արդյունավետ ալգորիթմներ և գնահատելու ծրագրային լուծումների որակը:
Ա2	Դասակարգելու ծրագրավորման արդի միջավայրերը, բացատրելու դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, տարբեր խնդիրների լուծման համար ընտրելու համապատասխան լեզու՝ ներառյալ վեբ, համակարգային և արհեստական բանականության/մեքենայական ուսուցման (AI/ML) լուծումները:	Բ2	Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ:
Ա3	Մեկնաբանելու մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության հիմնական տեսությունները, մեթոդները և մոտեցումները, ինչպես նաև տվյալագիտության և մեքենայական ուսուցման հիմնարար մոդելների կիրառման սկզբունքները տնտեսական, գիտական և ինժեներական խնդիրների ոլորտներում:	Բ3	Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոդելներ՝ իրական տվյալների հիման վրա կանխատեսումներ և վերլուծություններ կատարելու, ծրագրային համակարգեր մշակելու համար:
Ա4	Ներկայացնելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմնական հասկացությունները, խնդիրները, մեթոդները և մոդելները, ինչպես նաև բնութագրելու դրանց կիրառման հնարավորությունները գործնական խնդիրների լուծման գործընթացում՝ ներառյալ լեզվային մոդելների և խելացի համակարգերի օգտագործումը:	Բ4	Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր:
Ա5	Բացատրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և ցանցային ճարտարապետությունների կառուցվածքային ու գործառնական սկզբունքները, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության հիմնարար հասկացությունները և, դրանց դերը բարձր արդյունավետության հաշվարկային ու արհեստական բանականության (AI) համակարգերում:	Բ5	Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետության, տեղեկատվական անվտանգության, կրիպտոգրաֆիայի և ժամանակակից կիրառական տեխնոլոգիաների սկզբունքները և մեթոդները:
Ա6	Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի կառուցման ու գործարկման հիմնարար սկզբունքները, CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաների հիմնական հասկացություններն ու ճարտարապետական մոտեցումները, ինչպես նաև ծրագրային համակարգերի մշակման կենսացիկլի և ծրագրային արտադրանքների շուկայական գնահատման հիմնական մեթոդներն ու ցուցանիշները:	Բ6	Նախագծելու, մշակելու և ներդնելու ժամանակակից ծրագրային համակարգեր՝ կիրառելով DevOps, CI/CD, ամպային (AI/LLM) և ավտոմատացված տեխնոլոգիաներ, ապահովելով համակարգերի հուսալիությունը, մասշտաբայնությունը և արդյունավետությունը:
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			

Գ1	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:	Գ5	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:	Գ6	Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
Գ3	Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:	Գ7	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
Գ4	Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:	Գ8	Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԿԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/Բ01														+		+	+			
Անգլերեն -1	0305/Բ004														+		+	+			
Քաղ.պաշտպան. և արտակարգ իրավիճակ. բնակչ. առաջին բուժօգնություն	0001/Բ02																+			+	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/Բ02														+		+	+			
Ռուսաց լեզու-1	0305/Բ001														+		+	+			
Անգլերեն -2	0305/Բ005														+		+	+			
Ռուսաց լեզու-2	0305/Բ 002														+		+	+			
Հայոց պատմություն-1	0304/Բ01																+	+			
Հայոց պատմություն-2	0304/Բ02																+	+			
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/Բ01																+	+			
Փիլիսոփայություն	0304/Բ 07																+	+			
Ֆիզդաստիարակություն	0001/Բ01																	+		+	
Ֆիզդաստիարակություն	0001/Բ03																	+		+	
Ֆիզդաստիարակություն	0001/Բ04																	+		+	
Ֆիզդաստիարակություն	0001/Բ05																	+		+	
Տնտեսագիտության հիմունքներ	0201/Բ 01																+	+			
Գործարարության հիմունքներ	0201/Բ 02																+	+			
Իրավունքի հիմունքներ	0304/Բ 05																+	+			
Քաղաքագիտության հիմունքներ	0304/Բ 06																+	+			
Կրոնագիտության հիմունքներ	0304/Բ 03																+	+			
Մշակութաբանության հիմունքներ	0202/Բ 01																+	+			
Հոգեբանության հիմունքներ	0303/Բ 04																+	+			
Տրամաբանության հիմունքներ	0304/Բ 04															+		+			+
Բարոյագիտության հիմունքներ	0303/Բ 05																+	+			
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/Բ 06																+	+			
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/Բ 02										+	+				+					
Հաղորդակցման հմտություններ	0305/Բ 011														+	+		+			
Քննական և ստեղծագործական մտածողություն	0304/Բ 08														+				+		+
Մեդիագրագիտություն	0302/Բ 11														+	+					
Ռուսաց լեզու-3	0305/Բ 003														+		+	+			
Անգլերեն-3	0305/Բ 006														+		+	+			
Մասնագիտակա կառուցման (Պարտադիր)																					

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8
Մաթեմատիկական անալիզ -1	0105/Բ 04				+			+		+	+				+			+			+
Գծային հանրահաշվի տարրեր -1	0105/Բ 10				+			+		+	+				+			+			+
Դիսկրետ մաթեմատիկա-1	0104/Բ 03							+		+	+		+		+			+	+		+
Web ծրագրավորում	0104/Բ 17	+	+						+	+						+		+			
Ծրագրավորում-1	0104/Բ 04	+	+						+	+	+		+			+		+	+		+
Մաթեմատիկական անալիզ -2	0105/Բ 05				+			+		+	+				+			+			+
Գծային հանրահաշվի տարրեր-2	0105/Բ 11				+			+		+	+				+			+			+
Դիսկրետ մաթեմատիկա-2	0104/Բ 05							+		+	+		+		+			+	+		+
Ծրագրավորում-2	0104/Բ 06	+	+						+	+	+	+	+			+		+	+		+
Հետազոտության պլանավորում և մեթոդներ	0104/Բ 07	+								+	+				+		+		+		
Մաթեմատիկական անալիզ -3	0105/Բ 06				+			+		+	+				+			+			+
Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա և էլեկտրոնիկա	0105/ Բ 12			+		+	+			+	+	+	+			+	+	+	+		+
Prompt ճարտարագիտություն	0104/Բ 41		+		+	+			+	+	+		+	+	+	+			+		+
Ծրագրավորում-3	0104/Բ 09	+	+							+	+	+		+	+	+		+	+		+
ՀԲ* Կոմպյուտերային ճարտարապետություն և օպերացիոն համակարգեր	0104/Բ 10		+	+		+						+	+			+		+			
Դիֆերենցիալ հավասարումներ	0105/Բ 14							+		+	+				+			+			
Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	0105/Բ 16			+	+			+	+	+								+	+		+
Թվային անվտանգության հիմունքներ	0104/Բ 08	+	+			+	+				+	+	+					+	+		
Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ և Block Chain	0104/Բ 13	+	+			+				+	+	+	+		+				+		
ՀԲ* Մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ	0104/Բ 12			+				+	+	+					+			+			+
Տվյալների հենքեր	0104/ Բ 11	+		+			+		+	+	+		+					+			+
Ալգորիթմների տեսություն	0104/Բ 42	+						+	+			+			+				+		
«ՀԲ» Կոմբինատոր ալգորիթմներ և վերլուծություն	0104/Բ 15							+	+	+	+		+				+	+	+		+
Համակարգչային ցանցեր	0104/Բ 43	+		+		+	+				+	+	+					+	+		+
Տվյալագիտություն և ML	0104/Բ 39	+	+	+	+			+	+	+	+	+	+	+	+	+		+	+		+
Մասնագիտակա կառուցման (Հատուկ մասնագիտական)																					
ՀԲ* Տվյալների կառուցվածքներ և ալգորիթմներ	0104/Բ 19	+	+			+		+	+		+	+	+					+	+		+
ՀԲ* Ֆունկցիոնալ անալիզ	0105/ Բ15							+		+	+				+			+			+
Linux, DevOPS (Git and Packaging)	0104/Բ 40	+				+	+				+	+	+					+	+		+
Զուգահեռ ծրագրավորում	0104/Բ 21	+	+			+				+	+		+					+	+		+
Համակարգերի ճարտարագիտություն	0104/ Բ39	+	+		+	+		+	+		+	+	+					+	+		+
Մաթեմատիկական տրամաբանություն	0104/Բ 16							+									+	+	+		+

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																			
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8
Մասնագիտակա կառուցման (Հատուկ մասնագիտական)																					
ՀԲ* Կառավարվող համակարգերի մշակում և ծրագրային ապահովում	0104/Բ 23					+				+		+	+		+		+	+			+
Տեխնիկական համակարգերի ավտոմատ կառավարման հիմունքներ	0104/Բ24	+					+		+	+			+		+		+	+			+
Ճանաչման մեթոդները արհեստական բանականությամբ կառավարվող համակարգերում	0104/Բ 25				+	+				+	+	+	+				+	+			
Էլեկտրատեխնիկական սարքեր	0105/Բ 18									+	+	+	+		+		+	+			
ՀԲ* Էլեկտրոնիկա, սխեմատեխնիկա և ավտոմատ կառավարման տարրեր	0105/Բ 19					+	+			+	+	+	+		+		+	+			+
Ռոբոտատեխնիկայի հիմունքներ	0104/Բ 22						+			+	+		+		+		+	+			
Մասնագիտակա կառուցման (Հատուկ մասնագիտական)																					
ՀԲ* Համակարգերի անվտանգություն	0104/Բ 28	+	+			+					+	+							+		
Թվային անվտանգության առաջատար լուծումներ	0104/Բ 30	+	+			+					+	+	+						+		
Թվային անվտանգության համակարգերի կառավարում և անվտանգության ծառայությունների կազմակերպում	0104/Բ 31	+	+			+	+				+	+	+						+		
Թվային անվտանգության ստուգում, խոցելությունների հայտնաբերում	0104/Բ 27	+	+			+					+	+							+		
ՀԲ* Անվտանգ ծրագրային ապահովում և անվտանգության ճարտարագիտություն	0104/Բ 29	+	+			+			+		+	+	+						+		
Ծրագրային լուծումների որակի ապահովման հիմունքներ	0104/Բ 26	+	+			+					+	+							+		
Հարակից կրթական ծրագրերից ընտրվող դասընթացներ																					
Հարակից դասընթաց-1																					
Հարակից դասընթաց-2																					
Կրթական այլ մոդուլներ																					
Մասնագիտական պրակտիկա-1	0104/Բ 34				+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+	+	+		+
Մասնագիտական պրակտիկա-2	0104/Բ 35			+		+	+	+	+	+	+	+	+		+	+	+	+	+		+
Ավարտական աշխատանք	0104/Բ 36	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+	+	+		+

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂ**

**Բնական գիտությունների ֆակուլտետ
«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»
ԾՐԱԳՐԻ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)

1. 0302/ Բ 01	2. Հայրաց լեզու և խոսքի մշակույթ-1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք: Դասընթացի խնդիրները. Ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը: - Ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն): - Սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում: բ. գործնական մասնագիտական կարողություններ - Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք: - Գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, - Աշխատելու թիմում:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - քննարկում /բանավեճ - համագործակցային աշխատանք - մտազրոհ - վերլուծական մեթոդ - խոսքային կամ բանավոր մեթոդ - գրավոր մեթոդ - բացատրական մեթոդ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է		

հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր հարցում: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: Թեմա 3. Բառային մակարդակ: Թեմա 4. Քերականական մակարդակ: Ձևաբանություն: Թեմա 5. Շարահյուսություն: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ, Եր., 2015: 3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

1. 0304/Բ 01	2. Հայոց պատմություն-1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/15/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Դասընթացի խնդիրներն են. 1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: 2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորողություն: 3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. վերաբրտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը, 2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները, 3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը, 2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում, 3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում, 2. բանավիճելու: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ		

նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:	
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար 3. ռեֆերատ 4. անհատական և խմբային առաջադրանքներ:	
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր հարցում:	
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: Թեմա 3. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: Թեմա 4. Արշակունիների թագավորությունը: Թեմա 5. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 6. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 7. Հայաստանը ուշ միջնադարում:	
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009:	

1. 0305/ Բ 004	2. Անգլերեն -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների միջմշակութային հաղորդակցական հմտությունները: Դասընթացի խնդիրները. 1. Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար: 2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը: 2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները: 3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները: 4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս: 2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը: 3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: գ. քնդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից: 2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում: 3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ		

նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. հաղորդակցական մեթոդ 2. մտազրույց 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Թեստն անցնելուց հետո ուսանողը ստուգարքը ստանում է մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • լուսատեսաշար • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: Բաժին 2. Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: Բաժին 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitarian, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan. 2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency. 3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division. 4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.		

1. 0305/Բ 001	2. Ռուսաց լեզու -1	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ՝ ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից: Դասընթացի խնդիրներն են. 1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա: 2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք: 3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները: 4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը:		

3. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար: 4. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից: գ. քննիչանքական/փոխանցելի կարողություններ 1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին): 2. Հասկանալու և կարողանալ սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ, 2. համագործակցային աշխատանք, 3. էվրիստիկական մեթոդ, 4. մտազրույց, 5. ինդուկտիվ մեթոդ, 6. դեդուկտիվ մեթոդ, 7. վերլուծական մեթոդ, 8. խոսքային կամ բանավոր մեթոդ, 9. գրավոր մեթոդ, 10. բացատրական մեթոդ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Հնչյունաբանություն: Չայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Բաժին 2. Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Բաժին 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Բաժին 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.		

1. 0302/Բ 02	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական		

բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառնամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում: Դասընթացի խնդիրները. 1. Բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառնական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու խոսքի արժանիքները: 2. Կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Լուսաբանելու գործառնական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, կունենա խոսքային բարձր էթիկետ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնականությունը ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրույց 4. վերլուծականմեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո անց է կացվում բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Խոսքի արժանիքները: Թեմա 2. Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Թեմա 3. Խոսքի գործառնական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: Թեմա 4. Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015: 3. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002: 4. Բաղդկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003: 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:		

1. 0305/Բ 002	2. Ռուսաց լեզու -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի		

կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը: Դասընթացի խնդիրներն են. 1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա: 2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք: 3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները: 4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը: 2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով: 3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ընտրելու, վերլուծելու և աղապատացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով: 2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները: 3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ: 4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը: 5. Զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: գ. քնդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Գնահատելու, վերլուծելու և գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը: 2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնությունը ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. Էվրիստիկական մեթոդ 4. մտազրոհ 5. ինդուկտիվ մեթոդ 6. դեդուկտիվ մեթոդ 7. վերլուծական մեթոդ 8. խոսքային կամ բանավոր մեթոդ 9. գրավոր մեթոդ 10. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական

կարգերը, ուղղագրությունը: Բաժին 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: Բաժին 3. Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: Բաժին 4. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:
14. Հիմնական գրականության ցանկ 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности.

1. 0304/Բ 02	2. Հայոց պատմություն-2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/15/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Մտուցարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում: Դասընթացի խնդիրներն են. 1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: 2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն: 3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: 2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: 2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում: գ. քննիչանքական/փոխանցելի կարողություններ 1. Տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներն ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական		

գործունեության համար:	
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.	
1. դասախոսություն	
3. ռեֆերատ	
4. անհատական և խմբային առաջադրանքներ	
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.	
Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը, որից հետո տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:	
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.	
Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: Թեմա 2. Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 4. Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: Թեմա 5. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 6. Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 7. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: Թեմա 8. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: Թեմա 10. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Թեմա 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:	
14. Հիմնական գրականության ցանկ.	
1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012:	
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975:	
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000:	
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:	

1. 0305/F 005	2. Անգլերեն-2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:		
Դասընթացի խնդիրները.		
1. Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը:		
2. Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն		
1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները:		
2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ		
1. Ընկալելու և վերաբրտադրելու կարողացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:		
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:		
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ		
1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:		
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:		
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.		
Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի,		
Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:		
Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ		

նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. հաղորդակցական մեթոդ 2. մտազրոհ 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Թեստն անցնելուց հետո ուսանողը ստուգարքը ստանում է մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում. • գրավոր և բանավոր թարգմանություններ, • ռեֆերատ, • լուսատեսաշար • խմբային աշխատանք, • ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: Բաժին 2. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan. 2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency. 3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division. 4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.		

1.0105/ Բ 01	2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախագծողաճանաչելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Դասընթացի խնդիրները. 1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:		

2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները: 3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները: 2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները: 3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին: 2. Նախագծողական միջոցառումներ ներկայացնելու՝ գերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից: 3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն: 2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով: 3. Կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Պասիվ դասախոսություն 2. Ակտիվ դասախոսություն ✓ հարց ու պատասխան ✓ զրույց 3. Ինտերակտիվ դասախոսություն ✓ «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում ✓ հարց ու պատասխան ✓ բանավեճ ✓ զրույց
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Որից հետո անց է կացվում բանավոր հարցում նախապես տրված հարցաշարի շրջանակներում: 1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի գեկուցում: 2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի,

մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: Թեմա 2. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: Թեմա 3. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: Թեմա 4. Էներգիայի և նյութերի հոսքը Էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: Թեմա 5. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: Թեմա 6. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: Թեմա 7. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: Թեմա 8. Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, զիջատիչ-զոի փոխհարաբերությունը: Թեմա 9. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010: 2. Գրիգորյան Ա., Աղայան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008: 3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010: 4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002: 5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

1.0001/ Բ 02	2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3.2 ECTS կրեդիտ
4. 2 Ժամ/շաբ.	5.10/20/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները: 2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին: 3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները: 4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը: 5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն: 2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում: 3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում: 4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:		
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում: 2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:		

3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար 3. հարցադրումներ և քննարկումներ 4. լաբորատոր աշխատանքներ 5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշները Նախապես տրված հարցաշարի շրջանակում կազմակերպվող բանավոր ստուգարքի համար թույլտվություն է հանդիսանում նախնական համակարգչային թեստավորումը: Այնուհետև ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: Թեմա 1. Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Թեմա 2. Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: Բաժին 2. Քաղաքացիական պաշտպանություն: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկո-թյունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: Բաժին 3. ԱՌ-ում բնակչության առաջին բուժօգնություն: Թեմա 8. Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Թեմա 9. Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Թեմա 10. Սուր հիվանդություններ և թունավորումներ: Թեմա 11. Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Թեմա 12. Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Մարկարյան Ռ., Ջանջուղազյան Ն., Օհանջանյան Մ., Հարությունյան Ա., Հարությունյան Վ., Բաղդասարյան Լ., Հասարայան Ռ., Վարդանյան Ջ., Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր, Եր., 2006: 2. Հեղինակների կողմից, Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում, ուսումնական ձեռնարկ, Եր., 2007: 3. Մանասյան Գ., Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., 2007: 4. Աղամյան Մ., Փոխադրական անշարժացում, ուսումնամեթոդական աշխատանք, Եր., 2011: 5. Մանուկյան Ս., Ճաղարյան Գ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:		

1. 0304/Բ 07	2. Փիլիսոփայություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 5-րդ կիսամյակ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով		

զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար: Դասընթացի խնդիրները. 1. Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները: 2. Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները: 3. Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները: 2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները: 3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից: 2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը: 3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում: գ. քնդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներն ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. սեմինար 3. քննարկում 4. զեկուցում 5. ռեֆերատ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաթղթ		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: Թեմա 2. Կեցություն և մատերիա: Թեմա 3. Դիալեկտիկա: Թեմա 4. Բնություն: Թեմա 5. Մարդ և պրակտիկա: Թեմա 6. Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7. Գիտություն: Թեմա 8. Հասարակություն:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980: 2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Եր., 1987: 3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Եր., 1987: 4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1980: 5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Եր., 2004: 6. Փիլիսոփայության բառարան, Եր., 1975:		

1.0001/ Բ 01, Բ 03	2.Ֆիզդաստիարակություն	3.0 կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.0/60/0	

6.1-ին, 2-րդ կիսամյակներ	7.Մտուգարք
8.Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակչիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի. 1. ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, 2. նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, 3. բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց, 4. նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, 5. զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:	
Դասընթացի խնդիրներն են. 1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում, 2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ, 3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, 4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք, 5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:	
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: 2. Թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը: 3. Ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները: 4. Ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները: 5. Առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրելու դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ): 2. Ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում: 3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը: 2. Դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից: 3. Կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:	
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնաբոյունքը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.	

Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ . • տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), • մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), • անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), • ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), 2. արտաուսումնական պարապմունքներ. • ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, • վերականգնողական միջոցառումների իրականացում, • մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, • ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, • մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, • մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:
12. Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:
13. Դասընթացի բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. <u>1-ին կիսամյակ</u> Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլ: Թեմա 2. Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: Թեմա 3. Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: Թեմա 4. Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ): <u>2-րդ կիսամյակ</u> Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրորբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պատկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Թեմա 2. Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պատկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: Թեմա 3. Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերնից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: Թեմա 4. Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: Թեմա 5. Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ

ոտքերի հրումով: Թեմա 6. Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: Թեմա 8. Ստուգարքային ձևերի նախապատրաստում: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007: 2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002: 3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978: 4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000: 5. Բաբայան Մ., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989: 6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005: 7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002: 8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991: 9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007: 10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:
--

1.0001/ Բ 04, Բ 05	2. Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/60/0	
6.3-րդ, 4-րդ կիսամյակներ	7. Ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի. 1. ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը, 2. նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը, 3. բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը, 4. զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն, 5. կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց: Դասընթացի խնդիրներն են. 1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում, 2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ, 3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, 4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք, 5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,		

- Ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ: - Հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը: - Թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը: - Ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ: բ. գործնական մասնագիտական կարողություններ - Պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: - Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնել օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր, - Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ: - Կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարականների փոխադարձ վերահսկողություն: - Աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ: - Վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները: - Կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս: - Կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:	10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ7.Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - Վերահսկողական ուսումնական պարապմունքներ . - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ), - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ), - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ), - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ), - արտաուսումնական պարապմունքներ. - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում, - վերականգնողական միջոցառումների իրականացում, - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի, - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով, - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում, - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:	12.Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

3-րդ կիսամյակ

Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: **Թեմա 2.** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 3.** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: **Թեմա 4.** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: **Թեմա 5.** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: **Թեմա 6.** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: **Թեմա 7.** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: **Թեմա 8.** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: **Թեմա 9.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: **Թեմա 10.** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

4-րդ կիսամյակ

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: **Թեմա 2.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերնից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: **Թեմա 5.** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: **Թեմա 6.** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: **Թեմա 7.** Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: **Թեմա 8.** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: **Թեմա 9.** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: **Թեմա 10.** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): **Թեմա 11.** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: **Թեմա 12.** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: **Թեմա 13.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007:.
2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Ս., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

1.0201/Բ 01	2.Տնտեսագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	

6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. Ստուգարք
8. Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ: Դասընթացի խնդիրները. 1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները: 2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները: 3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից: 4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Մահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները: 2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը: 2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում: 2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ:	
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:	
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ 2. սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր 3. խմբային աշխատանքներ 4. ռեֆերատներ:	
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:	
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: Թեմա 2. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: Թեմա 3. Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: Թեմա 4. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Թեմա 5. Սպառողի վարքի տեսություն: Թեմա 6. Արտադրության ծախքերի տնտեսություն: Թեմա 7. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: Թեմա 8. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: Թեմա 9. Ռեսուրսների գների ձևավորումը: Թեմա 10. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: Թեմա 11. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Թեմա 12. Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: Թեմա 13. Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: Թեմա 14. Միջազգային առևտրի տեսություն: Թեմա 15. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:	
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Գորթնի Զ., Տնտեսագիտություն, ԵՊՏՀ հրատ., Եր., 1999: 2. Սամուելսոն Ս., Նորթհանուս Ու., Տնտեսագիտություն, Եր., 1997: 3. Макконнелл К.Р., Брю С.Л. Экономика. 17-ое изд., Москва, 2009. 4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998	

1.0201/Բ 02	2. Գործարարության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
-------------	------------------------------	-----------------

4. 2 ժամ/շաբ.	5.30/0/0
6. 3-րդ /4-րդ կիսամյակ	7.Ստուգարք
8.Դասընթացի նպատակն է հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի խնդիրները. 1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ: 2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար: 3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:	
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները: 2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: 3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը: 4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով ընտրել լավագույնը: 2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը: 3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում: 4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) 1. Աշխատելու թիմում: 2. Մոտիվացնելու: 3. Առաջնորդելու: 4. Աշխատելու տեղեկատվության հետ:	
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:	
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. գործնական խաղ /թիմային աշխատանք/ 2. դասախոսություն, սեմինար 3. ինքնուրույն աշխատանք /զեկույց, ռեֆերատ/ 4. ճանաչողական էքսկուրսիաներ:	
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց է կացվում գրավոր:	
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: Թեմա 2. Գործարարության միջավայրը և տեսակները: Թեմա 3. Գործարարության սուբյեկտները: Թեմա 4. Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: Թեմա 5. Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը, որպես գործարարության նախադրյալ: Թեմա 6. Մարքեթինգի պլան: Թեմա 7. Գործունեության կադրային ապահովումը: Թեմա 8. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: Թեմա 9. Արտադրական պլան Թեմա 10. Ինքնարժեքի կալկուլյացիա: Թեմա 11. Ձեռնարկատիրական ռիսկ: Թեմա 12. Ֆինանսական պլանավորում:	
14.Հիմնական գրականության ցանկ. 1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова, «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/ 2. В.Ю.Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011. 3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf/	

4. С.И.Башаримова, М.В.Дасько, «Основы предпринимательства» учебное пособие.
5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 <https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf/>.

1.0304/Բ 06	2.Քաղաքագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ: Դասընթացի խնդիրները. 1. Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: 2. Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները: 3. Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները: 2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները: 3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները: 2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: 3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 2. Աշխատելու թիմում: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճեր 4. զեկուցումներ: 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: Թեմա 2. Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: Թեմա 3. Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: Թեմա 4. Քաղաքական ընտրանի /էլիտա/: Թեմա 5. Քաղաքական լիդերություն: Թեմա 6. Քաղաքական ռեժիմներ: Թեմա 7. Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: Թեմա 8. Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 9. Քաղաքացիական հասարակություն: Թեմա 10. Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: Թեմա 11. Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 12. Գաղափարախոսությունների տեսություն: Թեմա 13. Ազգեր և ազգային քաղաքականություն: Թեմա 14. Քաղաքականությունը և կրոնը: Թեմա 15. Քաղաքական մշակույթ:		

14. Հիմնական գրականության ցանկ. 1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Եր., 2006: 2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004. 3. Гаджиев К.С., Политология. Москва, 2005. 4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999. 5. Пушкарева Г.В., Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002. 6. Мальцев В.А., Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.
--

1. 0202/F 01	2. Մշակութաբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա: Դասընթացի խնդիրները. 1. Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ: 2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները: 2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները: 2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան: 3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Աշխատելու թիմում: 2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճեր 4. ռեֆերատներ 5. զեկուցումներ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Թեմա 2. Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: Թեմա 4. Մշակույթ-բնություն-հասարակություն: Թեմա 5. Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): Թեմա 6. Անտիկ (հունահռոմեական) մշակույթ:		

Թեմա 7. Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: Թեմա 8. Վերածնունդ և Ռեֆորմացիա: Թեմա 9. Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: Թեմա 10. Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: Թեմա 11. Հայկական մշակույթ: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Եր., 2000: 2. Սարգսյան Ս., Մշակութաբանություն, Եր., 1997 3. Սարգսյան Ս, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Եր., 2004: 4. Арутюнов С., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004. 5. Розин В., Культурология, М., 1998.

1.0304/Բ 03	2. Կրոնագիտության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ /4-րդ կիսամյակ	7. Մտուգաբաժնի	
8. Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ: Դասընթացի խնդիրները. 1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ: 2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք: 2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները: 2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճ 4. զեկուցում 5. ռեֆերատ 6. անհատական և խմբային առաջադրանքներ: 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Մտուգաբաժնի անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա 2. Ժամանակակից կրոնները: Ազգային և		

համաշխարհային կրոններ: Թեմա 3. Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա 4. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Թեմա 5. Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Թեմա 6. Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա 7. Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Թեմա 8. Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Թեմա 9. Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Թեմա 10. Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002: 2. Աստվածաշունչ: 3. Գուրան, Սոֆիա, 1929: 4. Երուանդ վրդ. Տեր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հ. Ա., Էջմիածին, 1908. 5. Владимирон Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998. 6. История религии, т. 1-2, М., 2002.

1.0303/Բ 05	2. Բարոյագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգաք	
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը: Դասընթացի խնդիրները. 1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին: 2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին: 3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը: 4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգային և համամարդկային տեսանկյունից: 5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները: 6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները: 2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին: 2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգային և համամարդկային տեսանկյունից: 3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները: գ. քննիական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկումներ		

3. գեկուցումներ:
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաթք. Ստուգաթքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն. Սեր: Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: Բաժին 3. Բարոյականություն և ազատություն: Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն: 14.Հիմնական գրականության ցանկ. 1. А. Разин, Этика, Москва, 2003. 2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004. 3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984. 4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000. 5. Словарь по этике.

1. 0304/Բ 05	2. Իրավունքի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. Ստուգաթք	
8. Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ: Դասընթացի խնդիրները 1. Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ: 2. Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները: 2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը: 3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ: 2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում: 3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը: 10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական		

գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.		
1. դասախոսություն		
2. ռեֆերատ		
3. զեկուցում:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.		
Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.		
Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: Թեմա 2. Սահմանադրական իրավունք: Թեմա 3. Քաղաքացիական իրավունք: Թեմա 4. Քրեական իրավունք: Թեմա 5. Աշխատանքային իրավունք: Թեմա 6. Ընտանեկան իրավունք: Թեմա 7. Տեղական ինքնակառավարում: Թեմա 8. Վարչական իրավունք: Թեմա 9. Դատավարական իրավունք: Թեմա 10. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: Թեմա 11. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: Թեմա 12. Միջազգային իրավունք:		
14. Հիմնական գրականության ցանկ.		
1. Այվազյան Ն., Սահմանադրական իրավունք, Երևան 2001:		
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003, 2006:		
3. Բարսեղյան Ս., ՀՀ Քաղաքացիական իրավունք, 4-րդ մաս, Երևան, 2000:		
4. Բարսեղյան Ս., ՀՀ Քաղաքացիական իրավունք, 1-ին մաս, Երևան 2000:		
5. Գրիգորյան Ս., Քրեական իրավունք, Երևան 2007:		
6. Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, հայերեն թարգմանությունը՝ Խ. Հարությունյանի, Երևան 1997թ.:		
7. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:		
8. Պետրոսյան Գ., Աշխատանքային իրավունք, Երևան, 2009:		
9. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:		
Նորմատիվ իրավական ակտեր		
1. ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ.,		
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,		
3. ՀՀ քրեական օրենսգիրք,		
4. ՀՀ ընտանեկան օրենսգիրք,		
5. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք,		
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք,		
7. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1522-Ն որոշում:		
8. Նորմատիվ իրավական ակտերը՝ դրանցում կատարված վերջին փոփոխություններով և լրացումներով տեղադրված են www.arlis.am Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում:		

1.0303/Բ 06	2.Սոցիոլոգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.Մտուցաբք	
8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:		
դասընթացի խնդիրները		
1. Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:		
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝		
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն		
1. Ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:		
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:		
բ. գործնական մասնագիտական կարողություններ		
1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:		
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:		

3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - Աշխատելու թիմում: - Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի, Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. - դասախոսություն - քնարկումներ - բանավեճեր - ռեֆերատներ - գեկուցումներ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: Թեմա 2. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: Թեմա 3. Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկլուս խումբ: Թեմա 4. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: Թեմա 5. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:
14. Հիմնական գրականության ցանկ. - Бабосов Е.М., Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8 - Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011. - Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г. - Долгоруков А.М., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011. - Ельмеев В.Я., Овсянников В.Г., Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.) - Кравченко А.И., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.

1. 0303/F 04	2. Հոգեբանության հիմունքներ	3. 2 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. Ստուգաբք	
8. Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզականային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները: Դասընթացի խնդիրները. - Բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները: - Լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ: - Ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - Ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները: - Տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները:		

3. Պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները: 4. Բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Մեկնաբանելու անձի հուզականային ոլորտի նրբությունները: 2. Տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները: 2. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկում 3. բանավեճ 4. գործնական պարապմունք 5. ռեֆերատ/էսսե 6. անհատական և խմբային առաջադրանքներ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: Թեմա 2. Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: Թեմա 3. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: Թեմա 4. Հոգեկանի ակտիվության մակարդակները: Թեմա 5. Հոգեկանի և գիտակցության զարգացումը: Թեմա 6. Անձի հոգեբանական բնութագիրը: Թեմա 7. Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: Թեմա 8. Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: Թեմա 9. Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: Թեմա 10. Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: Թեմա 11. Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: Թեմա 12. Մտածողություն, տեսակները, գործընթացները: Թեմա 13. Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: Թեմա 14. Անձի հուզականային կողմը: Թեմա 15. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, քննություններ:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., 2010: 2. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր., 1997: 3. Психология. Учебное пособие под. Ред. Е.И.Рогова. М., 2005: 4. Маклаков А.Г. Общая психология. М., 2007: 5. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003). 6. Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.		

1.0304/Բ 04	2.Տրամաբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, գերծ մնալ տրամաբանական սխալներից: Դասընթացի խնդիրները.		

1. ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները, 2. ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ, 3. ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին, 4. ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները, 2. մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերություններին, տրամաբանական հիմնական օրենքները, 3. սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները, 2. զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները, 3. զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. քննարկում 3. բանավեճ:		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:		
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հասկացություն: Թեմա 3. Դատողություն: Թեմա 4. Տրամաբանության օրենքները: Թեմա 5. Մտահանգում: Թեմա 6. Ապացուցում և հերքում: Թեմա 7. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, պարադոքս, հիպոթեզ:		
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976: 2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975. 3. Гетманов А., Логика, Москва, 1993. 4. Маковелский А., История логики, Москва, 1967. 5. Демидов И., Логика, Москва, 2004:		

1.0105/Բ 02	2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու		

տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը: Դասընթացի խնդիրներն են 1. ձևավորել բնագիտական աշխարհայացք, 2. ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը, 3. բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները, 4. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը, 2. ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքները, 3. մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում, 2. կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալու որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին, 3. կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը, 2. օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած տեղեկատվությունը, 3. ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Բ4. Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ5. Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետության, տեղեկատվական անվտանգության, կրիպտոգրաֆիայի և ժամանակակից կիբեռանվտանգային տեխնոլոգիաների սկզբունքները և մեթոդները: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. խոսքային մեթոդներ (դասախոսում, բացատրում, պատմում, զեկուցում), 2. գործնական մեթոդներ (վարժությունների և տնային առաջադրանքի կատարում), 3. տրամաբանական մեթոդներ (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա), 4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական), 5. համագործակցային ուսուցման մեթոդներ (թիմային և խմբային աշխատանքներ), 6. քննադական մտածողության մեթոդներ, 7. խմբային աշխատանքի մեթոդներ, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդներ, 9. վերահսկողության մեթոդներ (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգաբք. Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն: Ուսանողը ստանում է «ստուգված», եթե նա ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է՝ դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր առարկայի նպատակները, խնդիրները,

ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: Թեմա 2. Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: Թեմա 3. Նյութի կառուցվածքի հայեցակարգերը: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների հայեցակարգերը: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Թեմա 4. Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Թեմա 5. Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի հայեցակարգերը: Թեմա 6. Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Թեմա 7. Էվոլյուցիոն կենսաբանության հայեցակարգերը: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Եր., 2007: 2. Канке В., Концепции современного естествознания, Логос., М., 2002. 3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова).
--

1.0305/Բ 011	2.Հաղորդակցման հմտություններ	3.2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար: Դասընթացի խնդիրները՝ 1. նպաստել սովորողների քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու զարգացած մթնոլորտ, 2. ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները, 3. բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները, 4. դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ, 5. հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները, 2. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. որոշակի աշխատանքային և տարբեր միջավայրերում հաղորդակցվելու քաղաքակիրթ և բարյացակամ, 2. ընտրելու հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվառճական միջոցներ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. դրսևորելու լեզվական բարձր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Պասիվ դասախոսություն 2. Ակտիվ դասախոսություն ✓ <i>հարցուպատասխան</i> ✓ <i>զրույց</i> 3. Ինտերակտիվ դասախոսություն ✓ <i>«PowerPoint» համակարգչային ծրագրով տեսադրվագաշարերի ցուցադրում</i> ✓ <i>հարցուպատասխան</i> ✓ <i>բանավեճ</i> ✓ <i>զրույց</i>		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.		

Ստուգարք. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:
13. Համառոտ բովանդակություն. Թեմա 1. Հաղորդակցության դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հաղորդակցման խոչընդոտները. գործնական հաղորդակցում: Թեմա 3. Հաղորդակցման դասակարգումները: Թեմա 4. Ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Երևան, 2001: 2. Գաբրիելյան Յու., Լեզվական հաղորդակցության տեսություն, Երևան, 2018: 3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2009: 4. Պետրոսյան Ա., Գործարար հաղորդակցություն, Երևան, 2003թ.: 5. Պետրոսյան Հ., Մարտիրոսյան Ա., Գործարար և գիտական հայոց լեզու, Երևան, 2015: 6. Քարնեգի Դ., Ինչպե՞ս ձեռք բերել բարեկամներ և ինչպե՞ս ազդել մարդկանց վրա, 1936:

1. 0304/Բ 08	2. Քննական և ստեղծագործական մտածողություն	3.2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6. 3-րդ/4-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել քննական և ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները, ուսանողների մոտ ձևավորել ստեղծագործական և քննական մտածողություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i> 1. սահմանելու քննական և ստեղծագործական մտածողությունը, 2. մեկնաբանելու քննական և ստեղծագործական մտածողության հիմնական սկզբունքներն ու հատկանիշները, <i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i> 1. կիրառելու քննական և ստեղծագործական մտածողության գործիքները, 2. մեկնաբանելու քննական մտածողության տեսակները, <i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i> 1. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ստեղծագործական և քննական մտածողության սահմանումը: Թեմա 2. Ստեղծագործական և քննական մտածողության կարևորությունը: Թեմա 3. Ստեղծագործական և քննական մտածողության զարգացման փուլերը: Թեմա 4. Ստեղծագործական և քննական մտածողության խրախուսման մեթոդները: Թեմա 5. Քննական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացման մոտեցումները: Թեմա		

6. Ստեղծագործական և քննական մտածողության զարգացման գործիքները: Թեմա 7. Քննական մտածողության տեսակները: Թեմա 8. Ստեղծագործական մտածողության սկզբունքները, հիմնական հատկանիշները: 14. Հիմնական գրականության ցանկ. 1. Бутенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176 с. 2. Ивунина Е. Е. О различных подходах к понятию «критическое мышление» // Молодой учёный. — 2009. — № 11. — С. 170—174. 3. Турчин В. Ф. Феномен науки. Кибернетический подход к эволюции. — Изд. 2-е — М.: Словарное издательство ЭТС. — 2000. — 368 с. 4. Халперн Д. Психология критического мышления. — СПб.: Питер, 2000. — 512 с.
--

1. 0302/Բ 11	2. Մեդիագրագիտություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3/4-րդ կիսամյակ	7. Մտուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողին ներկայացնել հասարակության և մեդիայի փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացնել մեդիայի կողմից հանրային կարծիքի, սոցիալական դիրքորոշման, արժեքահամակարգի ձևավորման մեխանիզմներին, ուսումնասիրել հասարակական գիտակցության և մեդիամիջավայրի փոխազդեցությունների շրջանակը, հասկանալ դրանց նախադրյալները և հետևանքները: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. հիմնավորելու մեդիայի և տեղեկատվական հասարակության էությունը, դրանց հետ կապված հասկացությունները և հիմնական տեսությունները, 2. որոշելու մեդիայի արժեքաստեղծ գործառույթը, վերջինիս միջոցով հասարակական արժեքների ձևավորման փուլերը, 3. մատնանշելու սոցիալական դիրքորոշման փոփոխման մեխանիզմները՝ մեդիայի դերն ավելի ամբողջական պատկերացնելու համար, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. տարբերակելու մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը, 2. գնահատելու տեղեկատվական հասարակության հայաստանյան յուրահատկությունները, 3. հետազոտության ժամանակակից մեթոդներով համեմատելու մեդիատեսակները (մեդիա)՝ ըստ իրենց ազդեցիկության աստիճանի, 4. տարբերակելու ամբոխի կարգավորման/մանիպուլացման մեխանիզմներն ու հնարքները կոնկրետ դեպքերում, գ. քննադատական/փոխանցելի կարողություններ 1. արժևորելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու մեդիաարտադրանքին, 2. սեփական հետազոտություններում մեթոդաբանական սկզբունքներով համակարգելու մեդիաազդեցության մեխանիզմները:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն աշխատանքներ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Մտուգարքն անց է կացվում բանավոր:		

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հասարակության կառուցվածքը: Հասարակություն և անհատ: Թեմա 2. Մեդիա և մեդիամիջավայր: Մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը: Թեմա 3. Տեղեկատվական հասարակություն. ձևավորման նախադրյալները: Թեմա 4. Հասարակական գիտակցություն-մեդիամիջավայր. փոխադարձ ազդեցության բնույթը: Թեմա 5. Հասարակական գիտակցության մանիպուլյացիա: Թեմա 6. Մեդիա և արժեքներ. մեդիայի արժեքաստեղծ գործառույթը:
14.Հիմնական գրականության ցանկ. Morin E., Au-delà de la globalisation et du développement, société-monde ou empire-monde ? », La revue du MAUSS, 20, pp. 43-53, 2002. Назаров М. М., Массовая коммуникация и общество. Введение в теорию и исследования. — М.: «Аванти плюс», 2003. Поликарпова Е.В., Аксиологические Функции Масс-Медиа В Современном Обществе, Ростов-на-Дону, 2002.

1.0305/Բ 003	2.Ռուսաց լեզու -3	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել ռուսերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել ռուսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ռուսերենի բառակազմության միջոցները, 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում, 3. գործածելու ռուսերենին բնորոշ խոսակցական կառույցներ, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները, 2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ, 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն, 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ, 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2.Մայրենի և ռուս օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. գրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.		

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Շարահյուսություն: Թեմա 2. Ուղղագրության հիմնական կանոնները: Թեմա Մասնագիտական տեքստ:
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык. Под общ.ред. к.ф.н. доцента Лалаян С.А. Ер., изд-во ЕГУ, 2018. 2. Русский язык. Под общ.ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 3. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015. 4. Учебные пособия по специальности.

1.0305/Բ 006	2.Անգլերեն -3	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5. 0/30/0	
6.3-րդ/4-րդ կիսամյակ	7.ստուգարք	
8.Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ: Դասընթացի խնդիրները. 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել անգլերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան: 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները, 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում, 3. գործածելու անգլերենին բնորոշ խոսակցական կառույցներ, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները, 2. վարելու գրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ, 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. ունկնդրելու և վերարտադրելու գրույց/երկխոսություն, 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ, 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. գրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.		

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը: Թեմա 2. Խոսակցական անգլերենին բնորոշ կառույցների ուսուցում: Թեմա 3. Բանավոր խոսք՝ ուղղված ուսանողների անհատական ստեղծագործական մտքի ու վերլուծական ունակությունների խթանմանը:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015. 2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017. 3. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010. 4. Alexander L.G., Fluency In English, Longman, 1967. 5. Alexander L.G., For and Against, Longman, 1969.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)

1. 0105/F 04	2. Մաթեմատիկական անալիզ -1	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 45/45/0	
6. 1-ին կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել անալիզ-1-ի հիմնական գաղափարներին՝ սահմանների տեսությանն ու մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշվին:		
Դասընթացի խնդիրներն են. - ուսանողներին ծանոթացնել սահմանների տեսությանը. հաջորդականության սահմաններին և մեկ փոփոխականի ֆունկցիայի սահմանին, - ծանոթացնել նշանավոր սահմաններին, անըդհատ ֆունկցիաներին ու դրանց հատկություններին, - հիմնավորել մեկ փոփոխականի ֆունկցիայի ածանցյալի գաղափարը, ծանոթացնել դրա երկրաչափական և ֆիզիկական իմաստներին, - մանրակրկիտ ծանոթացնել մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշվին, այդպիսի ֆունկցիաների հատկություններին, ֆունկցիաների հետազոտմանն ու գրաֆիկների կառուցմանը:		
2. Ծրագրային նախագծեր մշակելիս կիրառելու C++ լեզվի օբյեկտային կողմնորոշված ծրագրավորման սկզբունքները, խնդրի իրականացման համար ստեղծելու համապատասխան նախագիծ՝ նրա տարրերը պահելով համապատասխան գրադարաններում, նկարագրելու օբյեկտների դասեր (class) և ստեղծելու համապատասխան տիպի օբյեկտներ, դրանց վրա կիրառելու համապատասխան գործողություններ: 3. Խնդիրների լուծման ընթացքում ազատ օգտվելու շաբլոնների ստանդարտ գրադարանից: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ուսումնասիրելու օբյեկտների հավաքածուների հատկությունները, նրանց մշակման համար առանձնացնելու համապատասխան մեթոդներ, մշակելու դասեր (class) տրված օբյեկտների հավաքածուի համար՝ ապահովելով նրանց համար համապատասխան գործողություններ: 2. Կիրառելու C++ լեզվի օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման սկզբունքները՝ ծրագրային նախագծեր մշակելիս և ներդնելիս, ստեղծելու դասեր, դրանք պահելու առանձին գրադարաններում և այլ խնդիրներում օգտագործելու դրանք: 3. Խնդիրների լուծման ընթացքում ազատ օգտվելու շաբլոնների ստանդարտ գրադարանից, ճիշտ և գրագետ խոսելու ծրագրավորման և ալգորիթմական/տեղեկատվական տերմիններով և մատուցելու իր գիտելիքները ուրիշին:	10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1.Ներկայացնելու և կիրառելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակողմնորոշված, համակարգային), ինչպես նաև հասկանալու ծրագրային ճարտարապետությունների հիմունքները՝ ներառյալ վեբ, զուգահեռ և բաշխված համակարգերը, GUI և ներկառուցված համակարգերը: Ա2.Դասակարգելու ծրագրավորման արդի լեզուները, վերլուծելու դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, հիմնավորելու համապատասխան լեզվի ընտրությունը տարբեր խնդիրների համար՝ ներառյալ վեբ, համակարգային և AI/ML լուծումները: Բ2.Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ: Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ5.Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետություն, տեղեկատվական անվտանգություն, կրիպտոգրաֆիա և ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաներ: Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ6.Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար: Գ8.Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. գործնական պարապմունքներ, 3. քննարկումներ, 4. տնային և անհատական տնային առաջադրանքներ, 5. ստուգողական աշխատանքներ, 6. ինքնուրույն աշխատանքներ:	12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ գնահատումով դասընթաց, առավելագույնը 20 միավոր (4+4+7+3+2): 1-ին ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,1 է: 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,1 է: Եզրափակիչ քննություն. Բանավոր՝ առավելագույնը 7 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց. 1 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 3 միավոր): Ինքնուրույն աշխատանք. առավելագույնը 3 միավոր, անհատական 2 տնային առաջադրանքների համար՝ 1. 5 միավոր: Միավորների քայլը 0,1 է: Մասնակցություն առավելագույնը 2 միավոր:		
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ցուցիչներ և հղումներ: Ցուցչային թվաբանություն: Ֆունկցիայի ցուցիչ: Թեմա 2. Կառուցվածքներ (struct) և միավորումներ (union): Թվարկվող տիպ (enum): Կառուցվածքների զանգվածներ: Թեմա 3. Օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման հիմնական սկզբունքները: Դասեր և օբյեկտներ: Թեմա 4. Կոնստրուկտորներ, նրանց տեսակները: Կոնստրուկտորի վերաբեռում: Դեստրուկտորներ: Կոնստրուկտորի և դեստրուկտորի կանչը, նրանց կատարման հաջորդականությունը: Թեմա 5. Օբյեկտների փոխանցումը ֆունկցիաներին, օբյեկտի վերադարձը ֆունկցիայից: Ընկեր (friend) ֆունկցիաներ և ընկեր դասեր: Թեմա 6. Դասի ստատիկ անդամներ: This ցուցիչը: Դասի հաստատուն անդամներ: Թեմա 7. Գործողությունների վերաբեռում: Գործողությունների վերաբեռումը ընկեր ֆունկցիաների և անդամ ֆունկցիաների միջոցով: Թեմա 8. Ժառանգում: Դասերի պաշտպանված անդամներ: Բաց, պաշտպանված և փակ ժառանգում: Վիրտուալ ֆունկցիաներ և պոլիմորֆիզմ: Թեմա 9. Մուտք/ելք-ի միջոցներ: Աշխատանք հոսքերի հետ: Թեմա 10. Շաբլոնային ֆունկցիաներ և դասեր: Ստանդարտ կոնտեյներային դասեր:		
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Կ.Ս.Դարբինյան, С ++ լեզվի ինքնուսուցման համառոտ ձեռնարկ, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2001թ. 2. Х.М. Дейтел, П.Дж. Дейтел., Как программировать на С++. М.: издательство «БИНОМ», 2000. 3. Б. Страуструп, Язык программирования С++, Специальное издание. М., Бином-Пресс, 2007 4. У. Сэвитч, С++ в примерах, Пер. с англ. Москва, ЭКОМ, 1997 5. Г. Шилдт, "Искусство программирования на С++" \ издательство: BHV-СПб, 2005 6. Т.А. Павловская, С/С++ Программирование на языке высокого уровня.- СПб Питер, 2001. 7. В.В. Подбельский, Язык С++: Учебное пособие. Москва, Финансы и статистика, 1995. 8. А. Д. Хомоненко, Программирование на С++. Учебное пособие., изд-во: Альтекс, 2003		

1.0104/Բ 07	2.Հետազոտման պլանավորում և մեթոդներ	3.3 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.15/15/0	
6.3-րդ կիսամյակ	7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8.Դասընթացը նպատակ ունի ուսանողներին մոտ ձևավորել պատկերացումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից հետազոտման պլանավորման եղանակներին, ծանոթացնել ներկայումս օգտագործվող ծրագրավորման հետազոտական աշխատանքի մեթոդներին:		
9.Դասընթացի ավարտին ուսանողը <u>ունակ կլինի՝</u> ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու հետազոտական աշխատանք իրականացնելու կանոնակարգը, 2. ճանաչելու կիրառվող մեթոդները, 3. բացատրելու պլանավորման էությունը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. տարբերակելու օգտագործվող մեթոդներից մեկի առավելությունը, 2. գործնականում իրականացնելու հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում, 3. կատարելու հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու հետազոտական խմբում, 2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, 3. վերլուծելու խնդիրները և առաջարկելու լուծման եղանակներ:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.		

Ա1.Ներկայացնելու և կիրառելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակոդմնորոշված, համակարգային), ինչպես նաև հասկանալու ծրագրային ճարտարապետությունների հիմունքները՝ ներառյալ վեբ, զուգահեռ և բաշխված համակարգերը, GUI և ներկառուցված համակարգերը: Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ6.Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:	11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, քննարկումներ տեղում, զրույց, պլայդերի և տեսաֆիլմերի ցուցադրում, 2. ինքնուրույն աշխատանքների կատարում, 3. տնային և անհատական տնային առաջադրանքներ, 4. ստուգողական աշխատանքներ, 5. ինքնուրույն աշխատանքներ: 12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Առանց ընթացիկ քննությունների գնահատման դասընթաց, առավելագույնը 20 միավոր (9+8+3): Եզրափակիչ քննություն. Բանավոր՝ առավելագույնը 9 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 3 հարց. յուրաքանչյուրը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Ինքնուրույն աշխատանք. առավելագույնը 8 միավոր, անհատական տնային առաջադրանք: Միավորների քայլը 0,5 է: Մասնակցություն. առավելագույնը 3 միավոր: 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: Հետազոտման նպատակի օբյեկտի ընտրություն: Թեմա 2. Հետազոտման ժամանակակից մեթոդները: Հետազոտման պլանավորում: Թեմա 3. Գրականության ուսումնասիրման եղանակներ և շտեմարաններ: Թեմա 4. Ուսումնասիրության հաջորդականություն և ռացիոնալ եղանակների ընտրություն: Թեմա 5. Ստացված արդյունքների քննարկում և վերլուծություն: Թեմա 6. Հետազոտությունների ներկայացման տեքստային, մաթեմատիկական և գրաֆիկական միջավայրերը: Թեմա 7. Գիտական աշխատանքի ձևակերպում. հոդված, թեզիս, թեզ, զեկուցում, մենագրություն, ձեռնարկ, ատենախոսություն, հաշվետվություն և այլն, դրա մշակման եղանակները: Թեմա 8. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը, ձևերը և տեսակները: 14.Հիմնական գրականության ցանկ. 1. Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ. Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ . ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն. - Երևան: ԵՊՀ հրատ., 2014. - 72 էջ: 2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 296 էջ: 3. Кузин Ф., Дипломная работа. Методика написания, правила оформления и порядок защиты. Методические указания, М., “Изд-во МПИ”, 1990, 50 с. 4. Методические рекомендации по подготовке и написанию научных статей для авторитетных изданий, индексируемых международными базами SCOPUS/ WEB OF SCIENCE. https://lib.almau.edu.kz/images/uploads/files/db02bf4cb3b14d182e092e0648e65113.pdf 5. Меледина Т.В., Данина М.М. Методы планирования и обработки результатов научных исследований. Учебн. пособие, С-Петербург: Ун-т ИТМО, ИХиБТ, 2015. 110 с. 6. Сидняев Н.И. Теория планирования эксперимента и анализ статистических данных, Юрайт, 2015. 495 с. 7. Creswell, J.W. Educational research: Planning, conducting, and evaluating quantitative and qualitative research (3rd). Upper Saddle River, NJ: Prentice Hall.2008. 8. Кукушкина. В.В. Организация научно-исследовательской работы студентов (магистров)//учебное
--	--

1. 0105/Բ 06	2. Մաթեմատիկական անալիզ – 3	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկական անալիզի 3-ի հիմնական գաղափարներին՝ շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշվին, անբացահայտ ֆունկցիաներին և բազմակի ու կորագիծ ինտեգրալներին: Դասընթացի խնդիրները. 1. Ուսանողներին ծանոթացնել շատ փոփոխականի ֆունկցիայի գաղափարին, նրա սահմանին ու անընդհատությանը: Ուսուցանել շատ փոփոխականի ֆունկցիայի մասնակի ածանցյալներն ու դիֆերենցիալը: 2. Ծանոթացնել անբացահայտ ֆունկցիաներին, նրանց գոյության թեորեմին: Ուսուցանել անբացահայտ ֆունկցիաների ածանցյալները: 3. Ծանոթացնել կորագիծ և մակերևույթային ինտեգրալներին, Գրինի , Ստոքսի և Գաուս-Օստոգրադսկու բանաձևերին: 4. Ուսուցանել կրկնակի և եռակի ինտեգրալները, դրանց հաշվման բանաձևերն ու հատկությունները, դրանցից բխող հետևանքները: 5. Ուսանողներին ծանոթացնել գծային տարածություններին, ենթատարածություններին, ենթատարածությունների հետ կատարվող գործողություններին: 6. Ծանոթացնել գծային օպերատորին, օպերատորի միջուկին, պատկերին, ռանգին, օպերատորի ներկայացման մատրիցին և սեփական արժեքին, վեկտորին: 7. Գրել օպերատորի բնութագրիչ բազմանդամը, ցույց տալ օպերատորի ներկայացման մատրիցների կապը տարբեր բազիսներում: 8. Ծանոթացնել Սմիթի նորմալ տեսքին, Ժորդանյան նորմալ տեսքին, Գրամ-Շմիդտի օրթոգոնալացման պրոցեսի կիրառմանը, ձևավորել քառակուսային ձևը կանոնական տեսքի բերելու կարողություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Սահմանելու և տարբերակելու կորագիծ ինտեգրալները իրարից, ձևակերպելու ճանապարհից անկախ լինելու պայմանը: 2. Սահմանելու և տարբերակելու մակերևույթային և բազմակի ինտեգրալները, դրանցից բխող հիմնական բանաձևերը: 3. Սահմանելու շատ փոփոխականի ֆունկցիա, թվարկելու նրա հիմնական հատկությունները: 4. Սահմանելու տեսության հիմնական գաղափարը՝ տարածության գաղափարը, թվարկելու և բնութագրելու տարբեր տարածություններ՝ գծային, էվքլիդեսյան և ունիտար: 5. Սահմանելու օպերատորների տեսության հիմնական գաղափարները՝ գծային օպերատոր, օրթոգոնալ և սիմետրիկ օպերատորներ, օպերատորի միջուկ, պատկեր, ներկայացման մատրից, սեփական արժեք, սեփական վեկտոր, բնութագրիչ բազմանդամ, օրթոնորմալ բազիս, օրթոգոնալ լրացում և այլն: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Հաշվելու շատ փոփոխականի և անբացահայտ ֆունկցիայի մասնական ածանցյալները, դիֆերենցիալները, հաշվելու ածանցյալն ըստ ուղղության և գրադիենտը: 2. Հաշվելու առաջին և երկրորդ սերի կորագիծ ինտեգրալները, կրկնակի և եռակի ինտեգրալները, Գրինի, Ստոքսի, Գաուս-Օստոգրադսկու բանաձևը կիրառել կոնկրետ խնդիրներ լուծելիս: 3. Կատարելու գործողություններ ենթատարածությունների հետ, պարզելու հավասարումների համակարգի տեսակը, գտնելու նրա լուծումը, գրելու օպերատորի ներկայացման մատրիցը, նրանց կապը տարբեր բազիսներում: 4. Գտնելու օպերատորի սեփական արժեքը, սեփական վեկտորը, բերելու մատրիցը Սմիթի նորմալ տեսքի, Ժորդանյան նորմալ տեսքի, կիրառելու Գրամ-Շմիդտի օրթոգոնալացման պրոցեսը, քառակուսային ձևը բերելու կանոնական տեսքի: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կատարելու թիմային աշխատանք: 2. Հստակ ներկայացնելու միտքը: 3. Օգտվելու տարբեր աղբյուրներից, վերլուծելու և դասակարգելու ստացած տեղեկատվությունը: 4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.		

Ա4. Ներկայացնելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմնական հասկացությունները, խնդիրները, մեթոդները և մոդելները, ինչպես նաև բնութագրելու դրանց կիրառման հնարավորությունները գործնական խնդիրների լուծման գործընթացում՝ ներառյալ լեզվային մոդելների և խելացի համակարգերի օգտագործումը: Բ1. Կիրառելու դասական մաթեմատիկայի, վիճակագրության և օպտիմալացման մեթոդները մասնագիտական խնդիրների լուծման համար, իրականացնելու անընդհատ և դիսկրետ մոդելների վերլուծություն, մշակելու արդյունավետ ալգորիթմներ և գնահատելու ծրագրային լուծումների որակը: Բ3. Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4. Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական 3. քննարկում 4. զեկուցում 5. ռեֆերատ:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Եզրափակիչ գնահատումով դասընթաց, առավելագույնը 20 միավոր (4+4+8+4): 1-ին ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 6 խնդիր, (4*0.5+2*1): Միավորների քայլը 0,1 է: 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 6 խնդիր, (4*0.5+2*1): Միավորների քայլը 0,1 է: Եզրափակիչ քննություն. Բանավոր՝ առավելագույնը 8 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 (2+2) հարց. 2 տեսական հարց (առավելագույնը 2 միավոր), 2 խնդիր (առավելագույնը 2 միավոր): Միավորների քայլը 0,1 է: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 4 միավոր, կիսամյակի ընթացքում իրականացրած 2 ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ յուրաքանչյուրը 2 միավոր: Միավորների քայլը 0,1 է:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մի քնի փոփոխականի ֆունկցիաների սահման, անընդհատություն, դիֆերենցելիություն: Թեմա 2. Մի քանի փոփոխականի ֆունկցիաների էքստրեմումները: Թեմա 3. Անբացահայտ ֆունկցիաներ, դրանց գոյությունն ու դիֆերենցելիությունը: Թեմա 4. Կորագիծ և կրկնակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները: Թեմա 5. Մակերևութային և եռակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Գևորգյան Գ. և ուրիշներ., Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, Եր., 2010: 2. Մուսոյան Վ., Մաթեմատիկական անալիզ, Եր., 2009: 3. Фихтенгольц Г.М., Курс дифференциального и интегрального исчисления, Наука, Москва, 1969.		

1. 0105/ Բ 12	2. Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա և էլեկտրոնիկա	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/0/30	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է. 1. ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին և զարգացման ներկա միտումներին, 2. զարգացնել պատճառ-հետևանք կապի մասին ունեցած գիտելիքներն ու կարողությունները,		

3. տեղեկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում ֆիզիկական երևույթների կիրառության և նրանց ներդրման մասին:
4. Ծանոթացնել էլեկտրոնիկայի ուսումնասիրության մեթոդներին, սկզբունքներին և զարգացման ներկա միտումներին:
5. Զարգացնել էլեկտրամագնիսական շղթաներում պատճառահետևանքային կապի մասին ունեցած գիտելիքներն ու կարողությունները:
6. Տեղեկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում ռադիոտեխնիկական համակարգերի, միկրոէլեկտրոնիկայի կիրառության, նանոտեխնոլոգիաներին և նրանց ընձեռած հնարավորությունների մասին:
7. քննարկել SS ոլորտում միկրոսխեմաների ու ռադիոտեխնիկական այլ սարքավորումների օգտագործման առկա օրինակները և նրանց հնարավոր զարգացումները:
8. ուսանողներին տալ տեսական գիտելիքներ տրամաբանական էլեմենտների, ինչպես նաև նրանցով ստեղծած համակարգչային սարքերի և համակարգիչների վերաբերյալ:

Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ **ձևավորել.**

1. յուրահատուկ տրամաբանական մտածողություն՝ հավանականային և վիճակագրական գաղափարների միջոցով,
2. տիպային խնդիրների լուծման և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,
3. տրամաբանորոն վերլուծելու և մաթեմատիկորեն մոդելավորելու մշակույթ և կարողություններ,
4. առաջադրված խնդիրների լուծելիությունը հետազոտելու ունակություններ,
5. գրականությունից օգտվելու և յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անհրաժեշտ նյութերը փնտրելու հմտություններ:

Դասընթացի խնդիրներն են.

1. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման փուլերին,
2. բացահայտել ֆիզիկայի հիմնական օրենքների իմաստներն ու կիրառության ոլորտները,
3. քննարկել SS ոլորտում ֆիզիկական սարքավորումների օգտագործման առկա օրինակները և նրանց հնարավոր զարգացումները,
4. ուսանողներին ծանոթացնել միկրոէլեկտրոնիկայի զարգացման փուլերին,
5. բացատրել միկրոէլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի և սխեմատեխնիկայի հիմնական գաղափարների իմաստներն ու կիրառության հնարավորությունները,
6. բացատրել ժամանակակից միկրոէլեկտրոնիկայում օգտագործվող նյութերի էլեկտրոնային տեսության հիմունքները, նրանցում ընթացող տարբեր՝ օրինակ, ֆոտոէլեկտրական երևույթների որակական և քանակական նկարագրությունը,
7. ծանոթացնել համակարգչի ֆիզիկական մոդելին,
8. ծանոթացնել տրամաբանական փոփոխականներին և ֆունկցիաներին,
9. բացատրել տրամաբանական սարքերի աշխատանքը,
10. բացատրել տրամաբանական սարքերով կազմված սխեմաների աշխատանքը,
11. տալ պատկերացում տարբեր կառուցվածքով թվային գեներատորների մասին:

9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու ֆիզիկայի հիմնարար օրենքները:
2. Նկարագրելու պրոցեսների պատճառահետևանքային կապերը:
3. Ներկայացնելու SS ոլորտի զարգացման գործում ֆիզիկայի նորագույն նվաճումների կիրառության օրինակներ:
4. Թվարկելու միկրոէլեկտրոնիկայում կիրառվող կիսահաղորդչային սարքերի տեսակները և նրանց հիմնական բնութագրերը:
5. Նկարագրելու նրանց հիմքում ընկած ֆիզիկական երևույթներն ու ընթացող պրոցեսների պատճառահետևանքային կապերը:
6. Մատնանշելու SS ոլորտի զարգացման գործում սխեմատեխնիկայի, միկրոէլեկտրոնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի նորագույն նվաճումների կիրառության օրինակներ:
7. Բացատրելու տրամաբանական սխեմաների աշխատանքը, նրանցով իրականացվող տրամաբանական գործողությունները:
8. Բացատրելու և բնութագրելու կոմբինացիոն, հաջորդական և ունիվերսալ տրամաբանական սարքերի աշխատանքը:
9. Ներկայացնելու համակարգիչների կառուցվածքը, թվարկելու նրանց առանձին սարքերը և բացատրելու այդ սարքերի տարրային հենքը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալու որակական ու քանակական գնահատական ֆիզիկական երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:
4. Տարբեր հետազոտություններում կիրառելու միկրոտարրերի և էլեկտրոնային համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները:
5. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական ֆիզիկական երևույթների վերջնական արդյունքների մասին:
6. Կատարելու համապատասխան եզրակացություններ էլեկտրամագնիսական առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:
7. Կառուցելու տրամաբանական գործողությունն իրականացնող սխեմաներ և ստանալու տրված սխեմային համապատասխանող տրամաբանական ֆունկցիան:
8. Կատարելու համակարգչի և համակարգիչը կազմող սարքերի ֆիզիկական և տրամաբանական վերլուծություն, կատարելու նրանց աշխատանքի տեսական հաշվարկներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Էլեկտրոնային գրադարաններից, ամսագրերից, համացանցից փնտրելու, վերլուծելու և համատեքստում մշակելու ֆիզիկայի տեսական և կիրառական խնդիրների վերաբերյալ օգտակար գիտական և տեխնիկական տեղեկատվություն:
2. Աշխատելու թիմում:
3. Հստակ ներկայացնելու վերլուծական միտքը:
4. Օգտվել գրականության աղբյուրներից, դասակարգել և վերլուծել ստացած տեղեկությունը:
5. Կատարել ստեղծագործական աշխատանք՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:
6. Առաջադրելու խնդիրներ և նրանց լուծման համար առաջարկել տարբերակներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա3.Ներկայացնելու մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները, կիրառելու տվյալագիտության գործիքներ տնտեսական, գիտական և ինժեներական խնդիրների լուծման համար, ներառյալ մեքենայական ուսուցման տվյալային մոդելներ:

Ա5.Ներկայացնելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և ցանցային ճարտարապետությունների կառուցվածքը, վերլուծելու տեղեկատվական անվտանգության սկզբունքները և դրանց կիրառումը բարձր արդյունավետ հաշվարկներում և AI համակարգերում:

Ա6.Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի հիմքերը, կիրառելու CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերլուծելու ծրագրային համակարգերի մշակման կյանքի ցիկլը և շուկայական ցուցանիշները:

Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր:

Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր:

Բ5.Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետություն, տեղեկատվական անվտանգություն, կրիպտոգրաֆիա և ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաներ:

Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները:

Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ6.Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության

ուղիները որոշելու համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. լաբորատոր աշխատանք 4. տնային աշխատանք 5. քննարկում 6. զեկուցում 7. ինքնուրույն աշխատանք 8. խմբային աշխատանք:		
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Եզրափակիչ գնահատումով դասընթաց, առավելագույնը 20 միավոր (4+4+7+2+3): 1-ին ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է , յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 4 միավոր, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն. Բանավոր՝ առավելագույնը 7 միավոր քննական տոմսի համար, որը պարունակում է 3 տեսական հարց (2+2+3): Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 2 միավոր, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար՝ 1 միավոր և ստուգողական աշխատանքներից՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Ինքնուրույն աշխատանք. առավելագույնը 3 միավոր, անհատական տնային առաջադրանքի համար՝ 2 միավոր և գործնական դասընթացներից ցուցաբերած ակտիվության և առաջադիմության համար՝ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:		
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. <u>Բաժին 1. Էլեկտրականագիտականություն</u> Թեմա 1. Էլեկտրաստատիկա: Թեմա 2. Էլեկտրական հոսանք: Թեմա 3. Մագնիսական դաշտ: Թեմա 4. Էլեկտրամագնիսական մակաձուռ: Թեմա 5. Էլեկտրամագնիսական տատանումներ և ալիքներ: <u>Բաժին 2. Էլեկտրոնիկա</u> Թեմա 1. Նյութերի էլեկտրոնային տեսության հիմունքները: Թեմա 2. Պինդ մարմինների կառուցվածքը: Թեմա 3. Կիսահաղորդիչների հատկությունները: Թեմա 4. Կիսահաղորդչային սարքեր: Թեմա 5. Միկրոսխեմաներ: Թեմա 6. Նանոէլեկտրոնային սարքեր: <u>Բաժին 3. Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա</u> Թեմա 1. Վերացական (ձևական) տրամաբանահանրահաշվական տարրային հենքեր: Թեմա 2. Ֆիզիկական տարրային հենքեր: Թեմա 3. Միկրոէլեկտրոնային տարրային հենքեր: Թեմա 4. Տրանզիստորային և ոչ տրանզիստորային տարրային հենքեր: Թեմա 5. Ֆիզիկական տրամաբանություն և նրա տարրային հենքերը: Թեմա 6. Հիշող սարքեր և նրանց տարրային հենքերը: Թեմա 7. Ոչ դասական տրամաբանության տարրային հենքեր. բազմարժեք, անհստակ, անորոշականացված:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Կալաշնիկով Ս., Էլեկտրականություն և մագնիսականություն, Մոսկվա, 1970: 2. Цедрик М.С., Сборник задач по курсу общей физики», Москва, 1989. 3. Հարությունյան Վ., Միկրոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները, Եր., 1995: 4. Վարդանյան Ռ., Ասատրյան Հ., Տրավաջյան Մ., Միկրոէլեկտրոնիկայի հիմունքներ: Լաբորատոր աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, Եր., 2009: 5. Аваев Н., Наумов Ю., Фролкин В., Основы микроэлектроники, учебник для ВУЗ-ов, Москва, Радио и связь, 1991. 6. Титце У., Шенк К., Полупроводниковая схемотехника, Москва, Мир, 1982.		

1.0104/Բ 41	2. Prompt ճարտարագիտություն	3. 3 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5.0/30/0	
6.4-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատմամբ	
8. Դասընթացի նպատակն է սովորեցնել ուսանողներին արդյունավետ հաղորդակցվել արհեստական բանականության լեզվային մոդելների հետ, ինչպիսիք են GPT, Claude, Gemini և այլն:		

<u>Դասընթացի խնդիրները.</u> 1. սովորեցնել նախագծել, օպտիմալացնել և փորձարկել prompt-ներ տարբեր խնդիրների համար, 2. սովորեցնել կիրառել prompt engineering-ը իրական խնդիրների լուծման համար, 3. զարգացնել լեզվային մոդելների նախագծման ոլորտում հետազոտական աշխատանք կատարելու հմտությունները:
Դասընթացի ավարտին ուսանողը <u>ունակ կլինի.</u> ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. բացատրելու լեզվային մոդելների հիմունքները և աշխատանքի սկզբունքները, 2. վերլուծելու և վերասահմանելու prompt-ներ օպտիմալ արդյունքներ ստանալու նպատակով, 3. հասկանալու և գնահատելու լեզվային մոդելների հետ կապված ռիսկերը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. նախագծելու, օպտիմալացնելու և փորձարկելու prompt-ներ տարբեր խնդիրների համար, 2. կիրառելու prompt engineering-ը իրական խնդիրների լուծման մեջ, 3. ստեղծելու prompt-ներով ուղղորդված հավելվածներ համապատասխան API-ների կիրառմամբ, օրինակ, OpenAI, Anthropic, Google և այլն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 4. օգտվելու արհեստական բանականության տարբեր համակարգերից, 5. տարբեր կիրառական ոլորտների շրջանակում ձևակերպելու արդյունավետ prompt-ներ, 6. վերլուծելու լեզվային մոդելների գեներացրած արդյունքները:
Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա2. Դասակարգելու ծրագրավորման արդի լեզուները, վերլուծելու դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, հիմնավորելու համապատասխան լեզվի ընտրությունը տարբեր խնդիրների համար՝ ներառյալ վեբ, համակարգային և AI/ML լուծումները: Ա4. Բացատրելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմնական խնդիրները, մեթոդները և մոդելները, մեկնաբանելու դրանց կիրառումը գործնական խնդիրներում, այդ թվում՝ լեզվային մոդելների և խելացի համակարգերի օգտագործման միջոցով: Ա5. Ներկայացնելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և ցանցային ճարտարապետությունների կառուցվածքը, վերլուծելու տեղեկատվական անվտանգության սկզբունքները և դրանց կիրառումը բարձր արդյունավետ հաշվարկներում և AI համակարգերում: Բ2. Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ: Բ3. Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4. Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ6. Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ: Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Գ6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. գործնական պարապմունքներ 2. քննարկումներ

3. տնային և անհատական տնային առաջադրանքներ 4. ստուգողական աշխատանք 5. ինքնուրույն աշխատանք:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. (4+4+3+2+7) I ընթացիկ քննություն. առավելագույնը 4 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 2 տեսական հարց (յուրաքանչյուրը՝ առավելագույնը 1 միավոր), 1 խնդիր՝ 2 միավոր), Գնահատման քայլը՝ 0.1: II ընթացիկ քննություն. առավելագույնը 4 միավոր քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 2 տեսական հարց (յուրաքանչյուրը՝ առավելագույնը 1 միավոր), 1 խնդիր՝ 2 միավոր), Գնահատման քայլը՝ 0.1: Մասնակցություն. առավելագույնը 3 միավոր: Ընթացիկ ստուգում. առավելագույնը 2 միավոր: 2 ստուգում կիսամյակի ընթացքում՝ յուրաքանչյուրը՝ 1 միավոր: Գնահատման քայլը՝ 0.1 միավոր: Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 7 միավոր՝ անհատական առաջադրանքի կատարման համար: Գնահատման քայլը՝ 0.1 միավոր:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Լեզվային մոդելների և Prompt ճարտարագիտության ներածություն (GPT, Claude, Gemini): Պատմություն, կիրառման ոլորտներ: Թեմա 2. Լեզվային մոդելների սկզբունքներ: GPT, Transformer, Tokens, Temperature, Top-p: Թեմա 3. Հիմնական Prompt-տեխնոլոգիաներ Zero-shot, One-shot, Few-shot: Թեմա 4. Prompt-ների ձևավորում: Շաբլոններ: Հարցադրումների հստակեցում, ցուցումների կառուցում: Թեմա 5. Prompt-ների կառուցում տարբեր ոլորտների համար: Թեմա 6. Մտքերի շղթայով պատասխանների բարելավում (Chain-of-Thought Prompting): Թեմա 7. Prompt-ների կառուցման տեխնիկաներ՝ ReAct, Tree of Thoughts: Պլանավորում, որոշումների կայացման և մտածողության մոդելավորում: Թեմա 8. Prompt ճարտարագիտության կիրառումը NLP-ում: Թեմատիկ դասակարգում, ամփոփում, թարգմանություն: Թեմա 9. Կոդի գեներացիա և վավերացում: Կոդի ստեղծում, ուղղում, մեկնաբանում: Թեմա 10. Տվյալների արտածում ու վերլուծություն: Prompt-ներով տվյալների հավաքագրում, սինթեզ, բիզնես անալիտիկա: Թեմա 11. Լեզվային մոդելների գնահատման մեթոդիկաներ: GPT-4, Claude, Gemini, LLaMA մոդելների գնահատում: Թեմա 12. Գործիքներ և հարթակներ: OpenAI Playground & API, LangChain / LlamaIndex, Flowise, PromptLayer. Թեմա 13. Prompt ճարտարագիտության բարելավողության հիմունքներ:
Հիմնական գրականության ցանկ. - Nathan Hunter, “The Art of Prompt Engineering with ChatGPT”. - Alan D. Moore, The Prompt Engineering Handbook”. - Prompt Engineering: Guide for LLMs. OpenAI Community Guide (PromptingGuide.ai). - Brown et al., “Language Models are Few-Shot Learners”, 2020, https://arxiv.org/abs/2005.14165. - Wei et al., “Chain-of-Thought Prompting Elicits Reasoning in LLMs”, 2022, https://arxiv.org/abs/2201.11903. - Liu et al., “A Survey of Prompt Engineering”, 2023, https://arxiv.org/abs/2305.09692. - Prompt Engineering Guide (PromptingGuide.ai)](https://www.promptingguide.ai/) - Awesome ChatGPT Prompts (GitHub)](https://github.com/f/awesome-chatgpt-prompts) - OpenAI Cookbook(https://github.com/openai/openai-cookbook)

1. 0104/Բ 09	2. Ծրագրավորում-3 (python)	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 15/45/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Երափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է զարգացնել ծրագրավորման ոլորտում ուսանողների կարողությունները և հմտությունները, ներկայացնել արդի ծրագրավորման հիմունքները տեխնոլոգիաները և գործիքները, տալ հիմնարար գիտելիք Python ծրագրավորման լեզվի վերաբերյալ, ինչպես նաև ծանոթացնել ծրագրավորման միջավայրերին, ստանդարտ գրադարաններին և դրանց կիրառման եղանակներին: Դասընթացի խնդիրները. - Տրամադրել հիմքային գիտելիքներ արդի ծրագրավորման լեզուների (Python) կառուցվածքի, գաղափարական ուղղությունների և կիրառական ոլորտների վերաբերյալ: - Սովորեցնել Python լեզվի սինտաքսիսը, տվյալների հիմնական տիպերը, կառուցվածքները, կառավարման հոսքերը, ֆունկցիաներն ու դասերը՝ ապահովելով հիմքային ծրագրավորման կարողությունների զարգացում: - Ծանոթացնել Python-ի ստանդարտ գրադարաններին (math, random, os, datetime և այլն) և դրանց գործառնություններին՝ պարզ խնդիրների լուծման համար: - Ներկայացնել Python լեզվով գրաֆիկական ինտերֆեյսների (CLI, GUI) ստեղծման		

հնարավորությունները՝ օգտագործելով համապատասխան գործիքակազմ (օր. tkinter): 5. Ներկայացնել տվյալների վիզուալիզացիայի հնարավորությունները Python-ում՝ matplotlib, seaborn և pandas գրադարանների միջոցով՝ զարգացնելով տվյալների վերլուծության ու ներկայացման հմտությունները: 6. Տալ ընդհանուր պատկերացում CLI, GUI և Web հավելվածների մշակման գործընթացների, ինչպես նաև դրա համար կիրառվող միջավայրերի (Jupyter Notebook, PyCharm, Visual Studio Code, Anaconda) մասին: 7. Նկարագրել հաճախորդ-սերվեր ճարտարապետությամբ ծրագրերի մշակման հիմնական գաղափարները և իրականացման սկզբունքները՝ օգտագործելով HTTP և socket հաղորդակցման միջոցներ:	9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ծրագրավորման Python լեզվի կառուցվածքը, տվյալների տեսակները, կառավարման հոսքերը, ֆունկցիաներն ու դասերը: 2. ներկայացնելու Python հավելվածների մշակման հիմնական գործիքային միջոցները (PyCharm, Jupyter Notebook, Anaconda, գրադարաններ) և դրանց կիրառման եղանակները: 3. սահմանելու Python-ի վրա հիմնված օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման հիմնական տարրերը՝ ներառյալ դասեր, ժառանգում, ինկապսուլյացիա և պոլիմորֆիզմ: 4. նկարագրելու հաճախորդ-սերվեր ճարտարապետությամբ ծրագրերի մշակման և իրականացման հիմնական միջոցները և ստանդարտները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. Գրելու և կարգաբերելու ծրագրեր Python լեզվով: 2. Լրացուցիչ աշխատանքների համար ստեղծելու և գործարկելու պարզ Python կոնսոլային ծրագրեր: 3. Օգտագործելու Python-ի ֆայլային համակարգը, կիրառելու և կառավարելու բացառությունների (exceptions) մեխանիզմը: 4. Կիրառելու ստանդարտ գրադարանների մեթոդներ՝ պարզ խնդիրների լուծման համար (մասիվների մշակում, տեքստի վերլուծություն, թվաբանական հաշվարկներ): 5. Օգտագործելու հիմնական IDE-ներ՝ PyCharm, Spyder և Jupyter Notebook՝ արագ և արդյունավետ կոդ գրելու համար: 6. Օգտագործելու Python լեզվի հիմնական գործիքները, տեխնիկական միջոցները, տվյալների փոխանցման եղանակները: 7. Կիրառելու Python-ի հիմնական դասերը և գրադարանները: 8. Մշակելու գրաֆիկական ինտերֆեյս: 9. Կիրառելու կլիենտ-սերվեր ծրագրերի հիմնական միջոցները գործնական հավելվածներ մշակելու համար: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Ինքնուրույն աշխատանք և ինքնազարգացման հմտություն (օգտվելու էլեկտրոնային գրադարաններից, ամսագրերից, համացանցից, փնտրելու օգտակար գիտական և տեխնիկական տեղեկատվություն, կիրառելու հավելյալ ռեսուրսներ): 2. Արդյունավետ օգտվելու ծրագրավորման միջավայրերից (IDE), գործիքներից (debugger, version control) և օնլայն ռեսուրսներից: 3. Հավաքագրելու, մշակելու և վերլուծելու անհրաժեշտ տեղեկատվություն: 4. Կազմելու արդյունավետ ալգորիթմներ և ծրագրավորելու դրանք: 5. Օգտագործելու Python լեզվի նորացված տարբերակները: 6. Աշխատելու թիմի կազմում: 7. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 8. Ձեռք բերելու գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ (ներկայացնելու իր կողմը, բացատրելու լուծման քայլերը, ինչպես նաև պատրաստելու տեխնիկական հաշվետվություններ կամ գիտաուսումնական զեկույցներ:)
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. Ներկայացնելու և կիրառելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակողմնորոշված, համակարգային), ինչպես նաև հասկանալու ծրագրային ճարտարապետությունների հիմունքները՝ ներառյալ վեբ, զուգահեռ և բաշխված համակարգերը, GUI և ներկառուցված համակարգերը: Ա2. Դասակարգելու ծրագրավորման արդի լեզուները, վերլուծելու դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, հիմնավորելու համապատասխան լեզվի ընտրությունը տարբեր խնդիրների համար՝ ներառյալ վեբ, համակարգային և AI/ML լուծումները: Ա6. Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի հիմքերը, կիրառելու	

CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերլուծելու ծրագրային համակարգերի մշակման կյանքի ցիկլը և շուկայական ցուցանիշները: F2.Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ: F3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: F4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: F5.Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետություն, տեղեկատվական անվտանգություն, կրիպտոգրաֆիա և ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաներ: F6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Q2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Q3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: Q5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Q6.Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար: Q8.Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Դասախոսություններ՝ տեսական բովանդակության ներկայացման համար 2. Փոքր խմբերով քննարկումներ՝ խնդիրների վերլուծության և խմբային փոխգործակցությանը նպաստման նպատակով 3. Գործնական պարապմունքներ՝ հմտությունների ամրապնդման համար 4. Տնային և ինքնուրույն աշխատանքներ, ինչպես նաև ստուգողական աշխատանքներ՝ ուսանողի անհատական առաջադիմության գնահատման համար 5. Խմբային նախագծային աշխատանքներ՝ գործնական խնդիրների լուծման միջոցով թիմային ունակությունների զարգացման նպատակով
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Եզրափակիչ գնահատումով դասընթաց, առավելագույնը 20 միավոր (3+3+2+5+6+1): 1-ին ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 3 միավոր, հարցատոմսը պարունակում է 3 խնդիր, յուրաքանչյուրը 1-ական միավոր: Միավորների քայլը 0,1 է: 2-րդ ընթացիկ քննություն. գրավոր՝ առավելագույնը 3 միավոր, հարցատոմսը պարունակում է 3 խնդիր, յուրաքանչյուրը 1-ական միավոր: Միավորների քայլը 0,1 է: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0,1 է: Ինքնուրույն աշխատանք. Առավելագույնը 5 միավոր՝ կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից և ինքնուրույն աշխատանքներից ձեռքբերումների համար: Եզրափակիչ քննություն. առավելագույնը 6 միավոր, հարցատոմսը պարունակում է 2 հարց (յուրաքանչյուրը 2-ական միավոր) և 1 խնդիր 2 միավոր: Միավորների քայլը 0,1 է: Մասնակցություն. Առավելագույնը 1 միավոր:
1. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Մինտաքսիս, ստանդարտ տիպերը, տվյալների կառուցվածքներ, օպերատորներ: Թեմա 2. ֆունկցիաներ և մոդուլներ: Թեմա 3. Python-ծրագրավորման միջավայրեր՝ Jupyter notebook, Colab, PyCharm: Թեմա 4. Numpy, pandas գրադարանները, հիմնական օբյեկտները, մեթոդները, աշխատանք դրանց հետ: Վիզուալիզացիայի միջոցներ: matplotlib գրադարանը: Թեմա 5. Գրաֆիկական ինտերֆեյսների ծրագրավորում (GUI ծրագրավորում): Թեմա 6. Web ծրագրավորում՝ Django և Flask ֆրեյմվորքերով: Թեմա

7. Հաճախորդ-սերվեր ճարտարապետությամբ ծրագրերի մշակման և կիրառման մեթոդներ:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Златопольский Д. М. Основы программирования на языке Python. Изд-во ДМК, М., 2017г. 2. https://habr.com/ru/hub/django/ 3. https://tproger.ru/translations/create-your-first-django-app/ 4. https://www.djangoproject.com/start/ 5. https://docs.djangoproject.com/en/4.0/

1. 0104/ Բ 10	2. Կոմպյուտերային ճարտարապետություն և օպերացիոն համակարգեր /ՀԲ	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 30/30/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից ԷՀՄ-ի բազմամակարդակ ճարտարապետությունը, հիմնական կառուցվածքները և կառուցվածքային հիմունքները, ձևավորել հիմնավոր պատկերացումներ և տալ գիտելիքներ ասեմբլեր լեզվի վերաբերյալ: Ներկայացնել օպերացիոն համակարգերի ներքին կառուցվածքը, հիմնական ֆունկցիաները: , այն հիմնահարցերը և խնդիրները, որոնք առաջանում են օպերացիոն համակարգերի նախագծման ժամանակ: Ձևավորել հմտություններ համակարգիչների և օպերացիոն համակարգերի ճարտարապետական և ծրագրային լուծումների հետազոտման և վերլուծության, այդ թվում դրանց անվտանգության տեսանկյունից:		
Դասընթացի խնդիրներն են. 1. Ուսումնասիրել ԷՀՄ բազմամակարդակ ճարտարապետությունը, տարրական տրամաբանական տարրերը և նրանց վրա հիմնված թվային կառույցները, կառուցվածքային և կիրառական առանձնահատկությունները: 2. Ձևավորել կարողություններ վիրտուալ միջավայրում առանձին ֆունկցիոնալ տարրերի աշխատանքին ծանոթանալու և թվային հանգույցներ նախագծելու համար: 3. Ուսումնասիրել պրոցեսորի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: 4. Ուսումնասիրել տվյալների ներկայացման եղանակները, ասեմբլեր լեզվի հրամանների համակարգը: 5. Ուսումնասիրել մուլտիպրոցեսորային կառուցվածքներ և նրանց կիրառական առանձնահատկությունները ու հնարավորությունները: 6. Ներկայացնել օպերացիոն համակարգերի հիմնական գործառնությունները և օգտատիրոջը հասանելի համակարգային ֆունկցիաները: 7. Ուսումնասիրել վիրտուալ հիշողության կազմակերպման և սպասարկման հարցերը: 8. Ուսումնասիրել հիշողության կազմակերպման տիպերը և նրանց ֆունկցիոնալ առանձնահատկություններն ու նշանակությունը: 9. Ներկայացնել տվյալների մուտքի/ելքի կազմակերպման եղանակները: 10. Բացատրել ընդհատումների մեխանիզմը, իրական ռեժիմում աշխատանքի սկզբունքները: 11. Ներկայացնել Բացառությունները և թակարդները, նրանց սպասարկումը և առանձնահատկությունները 12. Ուսումնասիրել օպերացիոն համակարգերի մոդուլային կառուցվածքը և նախագծման սկզբունքները: 13. Ներկայացնել տարբեր ռեժիմներում աշխատող օպերացիոն համակարգերը (փաթեթային, փոխգործուն, իրական ժամանակի) և դրանց առանձնահատկությունները: 14. Ուսումնասիրել բազմախնդրային օպերացիոն համակարգերի հիմնական հասկացությունները՝ պրոցեսներ, հոսքեր, սինխրոնիզացիա, պրոցեսների/հոսքերի պլանավորում և դիսպետչերիզացիա: 15. Ուսումնասիրել ֆայլային համակարգերը Windows և Linux օպերացիոն համակարգերում: 16. Ներկայացնել արդի համակարգչային համակարգերի ճարտարապետությունները: 17. Ուսումնասիրել միկրոպրոցեսորային համակարգերը:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու ԷՀՄ-ի բազմամակարդակ ճարտարապետության կազմակերպման սկզբունքները, տարրերը, սարքերն ու ֆունկցիոնալ հանգույցները և նրանց կառուցվածքային հիմունքները: 2. Ներկայացնելու ԷՀՄ-ում տվյալների ներկայացման ձևերը, ասեմբլեր լեզվի հրամանների համակարգը, բացատրելու ընդհատումների տիպերը և նրանց մեխանիզմը, օգտագործման եղանակները և ընդհատումների սպասարկումը: 3. Ներկայացնելու էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և միկրոկոնտրոլերային կառուցվածքների ճարտարապետությունը, դրանց կիրառման ժամանակակից ուղղությունները:		

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա1. Ներկայացնելու և կիրառելու ծրագրավորման ժամանակակից պարադիգմները (կառուցվածքային, օբյեկտակողմնորոշված, համակարգային), ինչպես նաև հասկանալու ծրագրային ճարտարապետությունների հիմունքները՝ ներառյալ վեբ, զուգահեռ և բաշխված համակարգերը, GUI և ներկառուցված համակարգերը:		

Ա6.Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի հիմքերը, կիրառելու CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերլուծելու ծրագրային համակարգերի մշակման կյանքի ցիկլը և շուկայական ցուցանիշները: Բ2.Իրականացնելու տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն՝ կիրառելով վիճակագրական մեթոդներ, տվյալագիտության գործիքներ և վիրտուալ հարթակներ, կատարելու քանակական և որակական վերլուծություն և ձևակերպելու հիմնավորված եզրահանգումներ: Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8.Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Առանց ընթացիկ քննությունների գնահատման մոդուլ՝ առավելագույնը 20 (6+6+8) միավոր: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 6 միավոր (լաբորատոր աշխատանքների գնահատում): Գնահատման միավորի քայլը 0,5 է: Ինքնուրույն աշխատանք. առավելագույնը 6 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն. բանավոր, առավելագույնը 8 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Ներածություն Ավտոմատ կառավարման տեսության առարկան: Հիմնական հասկացություններ և տերմիններ: ԱԿՀ զարգացման էտապները: Ավտոմատ կարգավորման համակարգի սահմանումը: Կառավարման և կարգավորման օբյեկտները, կարգավորվող մեծություններ, կարգավորիչներ: ԱԿՀ դասակարգումը: Կառավարման /կարգավորման/ հիմնական սկզբունքները: Ավտոմատ կառավարման տեսության խնդիրները և նշանակությունը մասնագետների պատրաստման գործում: Թեմա 1. ԱԿՀ ստատիկ և դինամիկ ռեժիմներ Ավտոմատ կարգավորման գծային և ոչ գծային համակարգեր: ԱԿՀ տեսության կայունության հասկացությունը: Ստատիկ և աստատիկ ԱԿՀ-երի հաստատված ռեժիմ: ԱԿՀ-ի տարրերի ստատիկ բնութագրերը: Ստատիկ ռեժիմների մաթեմատիկական նկարագրությունը: ԱԿՀ-ում դինամիկ ռեժիմների հասկացությունը: ԱԿՀ աշխատանքը անցողիկ ռեժիմներում: Դինամիկ ռեժիմների մաթեմատիկական հավասարումները, նրանց կազմումը և գծայնացումը: Շեղումներում դինամիկ հավասարումները: Առանց չափ/դիֆերենցիալ/ հավասարումներ: Դինամիկ համակարգերի բնութագրերը: Փոխանցման ֆունկցիա: Ժամանակային բնութագրեր. անցողիկ պրոցես և քաշային ֆունկցիա: Ֆունկցիաների միջև կապը: Լապլասի և Ֆուրյեի ուղիղ և հակադարձ ձևափոխությունները: Դյուամելի ինտեգրալը: Դինամիկ համակարգերի հաճախականային բնութագրերը և նրանց կառուցումը /հաճախականային փոխանցման ֆունկցիա, ամպլիտուդա-հաճախականային բնութագիր, լոգարիթմական հաճախականային

բնութագիր/:

Թեմա 2. Տիպային դինամիկ օղակներ

Օղակի կայունության հասկացությունը: Մինիմալ-ֆազային օղակներ: ԱԿՀ-ը տարրերի տրոհման սկզբունքը: Տիպային դինամիկ օղակի հասկացությունը: Ոչ իներցիոն, 1-ին և 2-րդ կարգի ապերիոդիկ և տատանողական օղակներ: Ոչ մինիմալ ֆազային օղակներ: Ուշացմամբ օղակ: Տիպային դինամիկ օղակների դիֆերենցիալ հավասարումները, անցողիկ և փոխանցման ֆունկցիաները, հաճախականային բնութագրերը:

Թեմա 3. Ավտոմատ կառավարման կառուցվածքային սխեմաները

Կառուցվածքային սխեմաներում պայմանական նշանները և նշանակումները: Տարբեր օղակների միացումներում կառուցվածքային սխեմաների ձևափոխությունները:

Մեկ կոնտուրային և բազմակոնտուր փակ համակարգերի կառուցվածքային սխեմաները և փոխանցման ֆունկցիաները: Կառուցվածքային սխեմայում փոխանցման ֆունկցիայի գտնելու Մեզոնի կանոնը: Բաց և փակ համակարգերի հաճախականային բնութագրերը, լոգարիթմական բնութագրերի կառուցումը: Ըստ զրգռող և առաջադրող ազդեցությունների և ըստ սխալանքի ԱԿՀ տիպային փոխանցման ֆունկցիաները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Лазарева Т. Я., Мартемьянов Ю. Ф. Основы теории автоматического управления: Учебное пособие. 2-е изд., перераб. и доп. Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2004. 352 с.
2. Теория автоматического управления. Ч. 2 / Под ред. А. В. Нетушила. М.: Высшая школа, 1972. 432 с.
3. Попов Е. П. Теория нелинейных систем автоматического регулирования и управления. М.: Наука, 1998. 256 с.
4. Попов В. Л. Теория линейных систем регулирования и управления. М.: Наука, 1989. 304 с.
5. Алексеев А. А., Имаев Д. Х., Кузьмин Н. Н., Яковлев В. Б. Теория управления: Учебник. СПб.: ЛЭТИ, 1999. 435 с.
6. <https://rudocs.exdat.com/docs/index-52012.html>

1. 0104/Բ 25	2. Ճանաչման մեթոդները արհեստական բանականությամբ կառավարվող համակարգերում	3. 3 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 15/15/0	
6. 8-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել արհեստական բանականության սկզբունքներով կառավարվող համակարգերում կիրառվող ճանաչողական մեթոդները և նրանց վրա հիմնված ռեալ աշխատող համակարգերը: Դասընթացի խնդիրները Ուսանողներին ներկայացնել. 1. արհեստական նեյրոնի կառուցվածքը, 2. 2-ական տրամաբանությամբ նեյրոնային ցանցերի կառուցվածքը, 3. բազմարժեք /պոլիստորային/ տրամաբանությամբ նեյրոնային ցանցերի կառուցվածքը, 4. միաշերտ ու բազմաշերտ նեյրոնային ցանցի կառուցվածքն ու առանձնահատկությունները, 5. պատկերների ճանաչողության մեթոդները և նրանց ծրագրային իրականացման սկզբունքները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու նեյրոնի հիմնական կառուցվածքը, 2. բնութագրելու նեյրոնային ցանցի առանձնահատկությունները, ներկայացնելու նեյրոնային ցանցի տեսակները և տիպերը, 3. նկարագրելու ցանցի ադապտացիայի պրոցեսը, 4. ներկայացնելու բազմարժեք նեյրոնային ցանցի կառուցվածքն ու նրա առանձնահատկությունները, 5. բացատրելու ճանաչման պրոցեսը և ներկայացնելու դրա համար կիրառվող մեթոդները, 6. ներկայացնելու նեյրոնային միաշերտ և բազմաշերտ ցանցերը, 7. բացատրելու նեյրոնային ցանցի ուսուցանման պրոցեսը, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կառուցելու նեյրոնային ցանցի օրինակ, 2. կատարելու գործակիցների ընտրություն, 3. մշակելու նեյրոնային ցանցի ալգորիթմներ և կազմելու դրանց իրագործող ծրագրեր, 4. մշակելու ֆիզիկական օբյեկտին ճանաչող ալգորիթմներ և դրանց իրագործող ծրագրեր, 5. վերլուծելու ճանաչողության տարբեր մեթոդները,		

6. կատարելու ճանաչման ալգորիթմների համեմատական վերլուծություն և գնահատելու արդյունքները, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու էլեկտրոնային տեխնիկական փաստաթղթերի և ռեսուրսների հետ:
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա4.Բացատրելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմնական խնդիրները, մեթոդները և մոդելները, մեկնաբանելու դրանց կիրառումը գործնական խնդիրներում, այդ թվում՝ լեզվային մոդելների և խելացի համակարգերի օգտագործման միջոցով: Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ5.Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետություն, տեղեկատվական անվտանգություն, կրիպտոգրաֆիա և ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաներ: Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. <i>Առանց ընթացիկ քննությունների գնահատման</i> մոդուլ՝ առավելագույնը 20 (6+6+8) միավոր, <i>Ընթացիկ ստուգումներ.</i> առավելագույնը՝ 6 միավոր (լաբորատոր աշխատանքների գնահատում): Միավորների քայլը 0,5 է: <i>Ինքնուրույն աշխատանք.</i> առավելագույնը 6 միավոր: Միավորների քայլը 0,5 է: <i>Եզրափակիչ քննություն.</i> բանավոր, առավելագույնը 8 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Ներածություն Արհեստական նեյրոնի նկարագրող հիմնական հասկացությունները: Թեմա 1. Նեյրոնի կառուցվածքը: Հատկությունները Արհեստական նեյրոնի կառուցվածքը: Նեյրոնի աշխատանքը: Գծային նեյրոնային ցանցեր: Հետադարձ կապով նեյրոնային ցանցեր: Ցանցի ուսուցանում: Միաշերտ և բազմաշերտ նեյրոնային ցանցեր: Որոշումների կայացում: Թեմա 2. Բազմաթեք տրամաբանություն: Պոլիստորային նեյրոններ Պոլիստորային տրամաբանություն: Պոլիստորային նեյրոնի կառուցվածքը, աշխատանքը: Առանձնահատկությունները: Պոլիստորային նեյրոնային ցանցեր: Պոլիստորային ցանցի ուսուցանում, միաշերտ և բազմաշերտ պոլսիտորային ցանցեր: Թեմա 3. Արհեստական բանականություն Արհեստական բանականության իրական հնարավորությունները, առարկան, բաղկացուցիչ մասերը, խնդիրները: Թեմա 4. Մեքենայական ուսուցում Մեքենայական ուսուցում, ձևեր, մեթոդներ, ալգորիթմներ:

Թեմա 5. Պատկերների ճանաչում Պատկերների ճանաչման գոյություն ունեցող մեթոդների վերլուծություն: Ֆիլտրացիայով հատկանիշների դուրս բերում: Ակտիվացիայի ֆունկցիա, շերտերի միավորում և սեղմում: Թեմա 6. Պատկերների ճանաչման գործընթաց Հիմնական փուլերը, տվյալների նախապատրաստում, մոդելի ձևավորում և գնահատում: Թեմա 7. Պատկերների ճանաչողության ցանցեր Կոնվոլյուցիոն նեյրոնային ցանց - CNN: Մեքենայական տեսողության համակարգեր: Դեկոնվոլյուցիոն նեյրոնային ցանց - DNN: Պատկերների ճանաչման մեթոդները, դասակարգումը և հիմնական հասկացողությունները: Ձևանմուշների ճանաչման հիմնադրույթները: Մոդելի նախագծում և ստեղծում, ճանաչում:		
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Галушкин, А.И. Нейронные сети: история развития теории: Учебное пособие для вузов. / А.И. Галушкин, Я.З. Цыпкин. - М.: Альянс, 2015. - 840 с. 2. Галушкин, А.И. Нейронные сети: основы теории. / А.И. Галушкин. - М.: РиС, 2015. - 496 с. 3. Каллан, Р. Нейронные сети: Краткий справочник / Р. Каллан. - М.: Вильямс И.Д., 2017. - 288 с. 4. Редько, В.Г. Эволюция, нейронные сети, интеллект: Модели и концепции эволюционной кибернетики / В.Г. Редько. - М.: Ленанд, 2019. - 224 с. 5. Редько, В.Г. Эволюция, нейронные сети, интеллект: Модели и концепции эволюционной кибернетики / В.Г. Редько. - М.: Ленанд, 2017. - 224 с. 6. Редько, В.Г. Эволюция, нейронные сети, интеллект: Модели и концепции эволюционной кибернетики / В.Г. Редько. - М.: Ленанд, 2015. - 224 с. 7. Хайкин, С. Нейронные сети: полный курс / С. Хайкин. - М.: Диалектика, 2019. - 1104 с. 8. Ширяев, В.И. Финансовые рынки: Нейронные сети, хаос и нелинейная динамика / В.И. Ширяев. - М.: Ленанд, 2019. - 232 с. 9. Ширяев, В.И. Финансовые рынки: Нейронные сети, хаос и нелинейная динамика: Учебное пособие / В.И. Ширяев. - М.: КД Либроком, 2015. - 232 с. 10. Ширяев, В.И. Финансовые рынки: Нейронные сети, хаос и нелинейная динамика / В.И. Ширяев. - М.: КД Либроком, 2016. - 232 с. 11. https://www.nlobooks.ru/magazines/novoe_literaturnoe_obozrenie/158_nlo_4_2019/article/21371/ 12. https://evileg.com/ru/post/619/ 13. https://habr.com/ru/post/312450/		

1. 0105/Բ 18	2. Էլեկտրատեխնիկական սարքեր	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 30/0/30	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել Էլեկտրատեխնիկական, էլեկտրական չափիչ և էլեկտրոնային սարքերի կառուցվածքները, կատարել տեխնիկական և ֆիզիկական օբյեկտների էլեկտրական շղթաների հաշվարկներ և մշակումներ: Դասընթացի խնդիրները՝ Ուսանողներին ուսուցանել՝ 1. էլեկտրական շղթաների տեսության օրենքները, 2. էլեկտրամագնիսական և մագնիսական դաշտերի հաշվարկները, 3. ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները, 4. լուծելու ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները, 5. կատարելու մագնիսական շղթայի հաշվարկ, 6. կատարելու հաստատուն հոսանքի շղթայի վերլուծություն, 7. կատարելու փոփոխական հոսանքի շղթայի վերլուծություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Ներկայացնելու էլեկտրական շղթաների տեսությունը, բացատրելու նրա օրենքները: 2. Բնութագրելու հաստատուն հոսանքի և փոփոխական հոսանքի շղթաները, ներկայացնելու նրանց առանձնահատկությունները, մեկնաբանելու նրանց բնութագրերը: 3. Ներկայացնելու ռեզոնանսի երևույթը և հաշվարկելու շղթաների հաճախականային բնութագրերը: 4. Ներկայացնելու և մեկնաբանելու գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ		

1. Կատարելու էլեկտրական շղթաներում անցողիկ պրոցեսների հաշվարկ և վերլուծություն: 2. Հաշվարկելու էլեկտրամագնիսական դաշտը: 3. Հաշվարկելու մագնիսական շղթաները: 4. Վերլուծելու հաստատուն և փոփոխական հոսանքների շղթաները: 5. Լուծելու գծային և ոչ գծային էլեկտրական շղթաների ֆունկցիոնալ հավասարումներ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Կիրառելու հաշվողական տեխնիկա և տարբեր ծրագրային համակարգեր հաշվարկներում և հետզոտական գործընթացներում: 2. Կիրառելու էլեկտրաչափիչ սարքավորումները և սարքերը: 3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 4. Աշխատելու թիմում, կատարելու նախագծային աշխատանք:
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ5.Նախագծելու և կառուցելու անվտանգ հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային ճարտարապետություն, տեղեկատվական անվտանգություն, կրիպտոգրաֆիա և ժամանակակից պաշտպանական տեխնոլոգիաներ: Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. • քննարկում /բանավեճ • համագործակցային աշխատանք • մտազրոհ • վերլուծական մեթոդ • խոսքային կամ բանավոր մեթոդ • գրավոր մեթոդ • բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Առանց եզրափակիչ գնահատման մոդուլ՝ առավելագույնը 20 (4+5+8+3) միավոր: 1-ին ընթացիկ քննություն. առավելագույնը 4 միավոր: Գնահատման միավորի քայլը՝ 0,5 է: 2-րդ ընթացիկ քննություն. առավելագույնը 5 միավոր: Գնահատման միավորի քայլը՝ 0,5 է: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 8 միավոր: Գնահատման միավորի քայլը՝ 0,5 է: Մասնակցություն. առավելագույնը 3 միավոր:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Էլեկտրական շղթաների տեսություն: Էլեկտրական շղթաների հիմնական հասկացություններ և տարրեր: Էլեկտրական չափիչ սարքեր Շղթաների տեսության հիմնական հասկացությունները, էներգիայի աղբյուրներ, էլեկտրական շղթաների հիմնական օրենքները: Էլեկտրական չափող սարքերի դասակարգումը և բնութագրերը: Մագնիսաէլեկտրական սարքեր, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը և կիրառման տիրույթը: Չափիչ կամրջակների աշխատանքի սկզբունքը: Հաստատուն հոսանքի չափող կամրջակ: Ունակություն և ինդուկտիվություն չափող փոփոխական հոսանքով չափող կամրջակի աշխատանքի սկզբունքը: Թեմա 2. Հաստատուն հոսանքի էլեկտրական շղթաներ Կիրխհովի օրենքները, պոտենցիալների դիագրաման: Վերադրման մեթոդ, փոխադարձության սկզբունքը: Կոնտուրային հոսանքների մեթոդ: Հանգուցային պոտենցիալների մեթոդ, համարժեք գեներատորի մեթոդ:

Հաստատուն հոսանքի շղթայում հզորությունը: Հզորությունների բալանսը: Հզորության չափումը վատմետրով:

Թեմա 3. Միևուստիպալ էշու-ով և հոսանքներով գծային շղթաներ

Միաֆազ փոփոխական հոսանքի հասկացությունը և նրա պատկերը կոմպլեքս հարթության վրա: Փոփոխական հոսանքի շղթայում ակտիվ դիմադրությունը, ինդուկտիվությունը և ունակությունը: Փոփոխական հոսանքի շղթայում հզորությունը: Հզորության չափումը վատմետրով: Հզորությունների բալանսը, դաշտերի էներգիան: Ռեզոնանսը էլեկտրական շղթայում: Շղթաների հաշվարկը ռեզոնանսի դեպքում: Լարումների ռեզոնանսի դեպքում ամպլիտուդա-հաճախականային բնութագրերը: Հոսանքների ռեզոնանսի դեպքում ամպլիտուդա-հաճախականային բնութագրերը:

Թեմա 4. Եռաֆազ շղթաներ

Եռաֆազ շղթաների հասկացությունը: «Աստղ» միացված սիմետրիկ եռաֆազ շղթա: «Եռանկյուն» միացված եռաֆազ շղթա: Ոչ սիմետրիկ եռաֆազ շղթաներ: Հզորությունը եռաֆազ շղթայում:

Թեմա 5. Էլեկտրական ապարատներ

Էլեկտրամեխանիական ապարատ, կառուցվածքը, հիմնական պարամետրերը, բնութագրերը, էլեկտրադինամիկ ուժերը: Կոնտակտներ. նրանց դասակարգումն ու կառուցվածքները, հիմնական պարամետրերը:

Թեմա 6. Էլեկտրամագնիսներ և մագնիսներ

Էլեկտրամագնիսական դաշտ, էլեկտրամագնիսական դաշտի տեսության հիմնական դրույթները: Մաքսվելի հավասարումները: Էլեկտրամագնիսներ և նրանց ընտրություն /պարզեցված հաշվարկ/: Հաստատուն և փոփոխական հոսանքների էլեկտրամագնիսներ: Դինամիկ բնութագրեր, արագագործ և դանդաղագործ էլեկտրամագնիսներ: Հաստատուն մագնիսներ և նրանց աշխատանքային ռեժիմները:

Թեմա 7. Էլեկտրական շղթաների անցողիկ պրոցեսներ

Անցողիկ պրոցեսների հասկացությունը, ընդհանուր դրույթները և կոմուտացայի օրենքները: Կոճի միացումը հաստատուն լարման շղթայում: RC շղթայի միացումը հաստատուն լարմանը: RLC շղթաների միացումը, անցողիկ պրոցեսը փոփոխական շղթայում:

Թեմա 8. Ոչ գծային շղթաներ: Ոչ սիևուստիպալ շղթաներ

Ոչ սիևուստիպալ հոսանքի և լարման շղթաներ, հիմնական պարամետրերը: Փոփոխական հոսանքի ոչ գծային շղթաներ, ոչ գծային ինդուկտիվությամբ ոչ գծային շղթաներ: Ֆերոմագնիսական միջուկով կոճ: Ֆերոմագնիսական միջուկ ունեցող կոճով անցնող հոսանքը: Ոչ սիևուստիպալ հոսանքի կերպափոխումը սիևուստիպալ հոսանքի: Ֆերոմագնիսական միջուկով կոճի փոխարինման սխեման: Տրանսֆորմատոր: Հիմնական առնչությունները, տրանսֆորմացիայի գործակից:

Թեմա 9. Էլեկտրասարքավորումներ

Էլեկտրական մեքենաներ, ինդուկտիվության կոճեր, դրոսելներ, տրանսֆորմատորներ և մագնիսական ուժեղարարներ: Էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուրներ, թվային տեխնիկայի տարրեր, լարեր, մալուխներ և շինաներ, հեռամեխանիկայի սարքեր:

Թեմա 10. Քառաբևեռ տեսություն

Հիմնական հավասարումները, քառաբևեռով փոխարինման սխեմաներ: Քառաբևեռի գործակիցների գործնական որոշումը: Քառաբևեռի բնութագրիչ պարամետրերի որոշումը: Քառաբևեռի հավասարումներ, համարժեք փոխարինման սխեմաներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Гальперин М. В. Электротехника и электроника: Учебник Москва: Издательство "ФОРУМ", 2016
2. <http://znanium.com/go.php?id=553180>
3. Бессонов Л. А. Теоретические основы электротехники. Электрические цепи: учебник для бакалавров : допущено М-вом образования РФ в качестве учебника для студентов вузов, обучающихся по направлениям подготовки дипломированных специалистов "Электротехника, электромеханика и электротехнологии", "Электроэнергетика", "Приборостроение", Москва: Юрайт, 2013
4. Сулейманов Р. Я. Теоретические основы электротехники: в 2-х частях : конспект лекций для студентов всех форм обучения Екатеринбург: УрГУПС, 2016
5. http://biblioserver.usurt.ru/cgi-bin/irbis64r_13/cgiirbis_64.exe?C21COM=F&I21DBN=KN&P21DBN=KN
6. Прянишников В.А. Электроника: Полный курс лекций СПб.: КОРОНА принт, 2006
7. Марченко А. Л. Основы электроники: учебное пособие для студентов вузов, обучающихся по неэлектротехническим направлениям подготовки бакалавров 550000- технические науки по специальности 650000-техника и технология Москва: ДМК Пресс, 2009
8. Чижма С. Н. Электроника и микросхемотехника Москва: Издательство УМЦ ЖДТ (Маршрут), 2012
9. http://e.lanbook.com/books/element.php?pl1_cid=25&pl1_id=4196
10. Штрапенин Г. Л., Шнырев В. Т. Электроника: в 2-х ч. : методические указания к выполнению лабораторных работ для студентов спец. 190901 - "Системы обеспечения движения поездов", 221000 -

"Мехатроника и робототехника", 230100 - "Информатика и вычислительная техника", 230400 - "Информационные системы и технологии" всех форм обучения Екатеринбург: УрГУПС, 2012
 11. Хоровиц П Хилл У - Искусство схемотехники, Пер. с англ.-М.Издательство, 704с., 2014,
 12. isma.polytechnic.am/lectures/energy/14NEWGI.htm

1. 0105/19	2. Էլեկտրոնիկա, սխեմատեխնիկա, ավտոմատ կառավարման տարրեր /ՀԲ	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 30/30/30	
6. 6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացել ժամանակակից էլեկտրոնային սխեմաների կառուցվածքին և սովորեցնել. 1. տեխնիկական և վիրտուալ փորձարարական հարթակների միջոցով մշակել և հավաքել սխեմաներ, կազմել դրանց գործունեությունն ապահովող ծրագրեր և փորձարկել, 2. մշակել և նախագծել ժամանակակից ռոբոտատեխնիկական և մեխատրոնային սարքերի էլեկտրոնային հանգույցներ, փորձարկել դրանք, կատարել դրանց հիմնական բնութագրերի հաշվարկ, 3. կիրառել անհրաժեշտ տվիչային միջոցները, մշակել համապատասխան ծրագրեր, տեղակայել և գործարկել մշակված ծրագրային միջոցները: Դասընթացի խնդիրները <u>Ուսանողների մոտ ձևավորել.</u> 1. անալոգային և թվային էլեկտրոնային սարքերի, հանգույցների և տեղեկատվական համակարգերի կառուցվածքների և նրանց աշխատանքի սկզբունքների իմացություն, 2. ժամանակակից էլեկտրոնային համակարգերի աշխատանքը վերլուծելու կարողություններ, 3. արդյունաբերական ռոբոտների մշակման, նրանց փորձարարական և սպասարկման նախագծա-հաշվարկային աշխատանքներ կատարելու ունակություններ, 4. ինքնուրույն տեխնիկական առաջադրանք կազմելու, էլեկտրոնային սարք սինթեզելու, փորձնական հետազոտություններ կատարելու հմտություններ, 5. տեխնիկական տեղեկատվության հետ, օգտվել անհրաժեշտ մասնագիտական գրականությունից օգտվելու ունակություններ:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու էլեկտրոնային սարքերի աշխատանքի սկզբունքը, 2. բացատրելու դինամիկ ռեժիմներում էլեկտրոնային սարքերի բնութագրերը, 3. ներկայացնելու նախագծերի մշակման վիրտուալ հարթակների գործիքակազմը, 4. տեխնիկապես հիմնավորելու էլեկտրոնային բլոկում էլեկտրոնային տարրի և հանգույցի կիրառությունը, 5. էլեմենտային բազայից ընտրելու համապատասխան տարրեր, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. մշակելու էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ, 2. կարդալու և կազմելու էլեկտրոնային սխեմաներ, կատարելու կոնկրետ էլեկտրոնային սխեմաների տեխնիկական հաշվարկներ և գնահատելու դրանց աշխատանքի դինամիկան, 3. նախագծելու էլեկտրամեխանիկական և մեխատրոնային համակարգերի էլեկտրոնային սարքեր և կատարելու կոնստրուկտորական մշակումներ, 4. անցկացնելու մշակված և հավաքված էլեկտրոնային սարքերի փորձարկումներ, 5. օգտագործելու վիրտուալ նախագծային հարթակների գործիքակազմը, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու էլեկտրոնային տեխնիկական փաստաթղթերի և ռեսուրսների հետ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա5. Բացատրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և ցանցային ճարտարապետությունների կառուցվածքային ու գործառնական սկզբունքները, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության հիմնարար հասկացությունները և, դրանց դերը բարձր արդյունավետության հաշվարկային ու արհեստական բանականության (AI) համակարգերում: Ա6. Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի հիմքերը, կիրառելու CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերլուծելու ծրագրային համակարգերի մշակման կյանքի ցիկլը և շուկայական ցուցանիշները: Բ3. Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման		

մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4. Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ6. Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն: Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:	11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ 7. բացատրական մեթոդ 12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Եզրափակիչ գնահատումով դասընթաց. առավելագույն 20 (4+4+8+4) միավոր: 1-ին ընթացիկ քննություն. առավելագույնը 4 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: 2-րդ ընթացիկ քննություն. հետազոտական աշխատանք՝ առավելագույնը 4 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: Եզրափակիչ բանավոր քննություն. առավելագույնը 8 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 4 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Ներածություն Դասընթացի խնդիրները և բովանդակությունը: Մեխատրոնային և ռոբոտեխնիկական համակարգերի տարրային հենք և էլեկտրոնային սարքեր, մեխատրոնիկայում և ռոբոտատեխնիկական համակարգերում էլեկտրական ազդանշաններ: Թեմա 1. Էլեկտրոնիկայի տարրեր: Հաղորդականություն: P-ն կիսահաղորդչային անցում, p-ն անցման ուղիղ և հակառակ միացումներ: Վոլտ-ամպերային բնութագիր: Ծակում: Կիսահաղորդչային դիոդներ, հիմնական պարամետրեր, տեսակները: Մեկկիսապարբերանի ուղղիչներ: Կամրջակային ուղղիչներ: Ֆիլտրերի կիրառությունը: Ուղղիչների արտաքին բնութագրեր: Լարման կայունարարներ: Ուղղիչի կառուցվածքային սխեման, կիրառությունը երկրորդային սնման աղբյուրներում: Էտալոնային հոսանքի և լարման աղբյուրներ: Երկրենո տրանզիստոր. աշխատանքի սկզբունքը: Տրանզիստորային ուժեղացում, աշխատանքային ռեժիմները. ակտիվ, հագեցում, փակում, բացասում: Երկրենո տրանզիստորների ստատիկ բնութագրերը: Դաշտային տրանզիստորներ: Դասակարգումը, հիմնական բնութագրեր: Մեկուսացված փականով դաշտային տրանզիստորներ, պարամետրերը և բնութագրերը և նրանց համեմատական բնութագրերը: Տիրիստոր. Ընդհանուր տեղեկություններ, աշխատանքի ռեժիմները և կառուցվածքը: Հիմնական ֆիզիկական պրոցեսները: Տեսակները. դինիստոր., տրինիստոր, սիմիստոր: Բնութագրեր և պարամետրեր, վոլտ-ամպերային բնութագրերի յուրահատկությունները: Կիրառության ասպարեզը: Տրանզիստորային ուժեղարար, հիմնական պարամետրերը, լարման կոմպարատոր: Տրանզիստորային բանալիներ: Թեմա 2. Էլեկտրոնային սխեմաների նախագծման և սխեմատեխնիկական մոդելավորման մեթոդներ և միջոցներ: Էլեկտրոնային սխեմաների նախագծման և սխեմատեխնիկական մոդելավորման մեթոդներ և միջոցների լուսաբանում: Proteus միջավայրի հնարավորությունները: Մոդելի տարրեր: Տպասալերի ավտոմատ նախագծման ծրագրերի /օրինակ՝ PCad տիպի/ հնարավորությունները: Պետական ստանդարտներ. Էլեկտրոնային սխեմաների տեսակներ և տիպեր, էլեկտրական սխեմաների իրագործման կանոններ: Պայմանական նշանակումներ: Տպասալերի պատրաստում:
--	---

Թեմա 3. Թվային էլեկտրոնային սխեմաներ և սարքեր: Տրամաբանական տարրեր, դասակարգում, հիմնական պարամետրերը և առանձնահատկությունները: Կոմբինացիոն թվային սարքեր, հաջորդական թվային սարքեր, Ասինխրոն թվային սարքեր: Ասինխրոն և սինխրոն թվային սարքեր: Հաշվիչներ, ռեգիստրներ, դեշիֆրատորներ: Թվային սարքեր, տեսակները, պարամետրերը: Թվային հիշող սարքերով հիմնված սարքեր:

Թեմա 4. Իմպուլսային սարքեր: Իմպուլսների գներատոր. ավտոտատանողական և մոնոստաբիլ գներատորներ: Օպերացիոն ուժեղարարների վրա հիմնված իմպուլսների գներատորներ, պարամետրերը: Ինտեգրալ թայմերներ: Ինտեգրալ թայմերներով գներատորային սխեմաներ: Ինտեգրալ չիպերով իմպուլսային գներատորներ և նրանց վրա հիմնված սարքեր: Տրամաբանական տարրերով իմպուլսների գներատորներ և ինտեգրալ թայմերներ, նրանց վրա հիմնված սարքեր: Հարմոնիկ տատանումների գներատոր, նշանակությունը, գործողության սկզբունքը: RC և LC-տիպի գներատորներ:

Թեմա 5. Ազդանշանների ձևափոխում և ուժեղացում: Ազդանշանների ձևափոխման հիմնական գործողությունները. ուժեղացում, ֆիլտրացիա, սպեկտրալ փոփոխություն, պահպանում, հաղորդում: Բիպոլյար տրանզիստորներով ուժեղացման սխեմաներ: Թույլ ազդանշանների ուժեղացման սխեմաներ: Ընդհանուր էմիտերով ուժեղացման սխեմաներ, ուժեղացման գործակից, մուտքային և ելքային դիմադրություններ: ջերմային կայունացում, հաճախականային բնութագրեր, թողարկման շերտ: Ընդհանուր էմիտերով և ընդհանուր կոլեկտորով ուժեղացման սխեմաներ, բազմակասկաղ միացումներ: Հետադարձ կապի միացման տեսակները: Հետադարձ կապով ուժեղարարի ընդհանրացված սխեման, նրա ազդեցությունը ուժեղարարի ընդհանուր պարամետրերի և հաճախականային հատկությունների վրա:

Հզորության գծային ուժեղարարներ: Հզոր տրանզիստորների կիրառելու առանձնահատկությունները: Բանալիային ուժեղարարներ:

Հաստատուն հոսանքի դիֆերենցիալ ուժեղարարներ, աշխատանքի սկզբունքը: Ուժեղացման գործակից, մուտքային և ելքային դիմադրություններ:

Թեմա 6. Օպտոէլեկտրոնիկայի տարրեր: Լույսի կառավարվող աղբյուրներ և նրանց վրա հիմնված տարրեր: Լուսային էներգիայի էլեկտրականի ձևափոխիչներ /ֆոտոընդունիչներ, ֆոտոդիմադրություններ, ֆոտոտրանզիստորներ, ֆոտոդիոդներ/: Ֆոտոընդունիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, բնութագրերը և պարամետրերը: Ֆոտոընդունիչների միացման սխեմաները: Կիրառման տիրույթները: Օպտոններ:

Թեմա 7. Օպերացիոն ուժեղարարներով սխեմաներ: Հետադարձ կապով օպերացիոն ուժեղարարների սխեմաներ, ինվերտոր և ոչ ինվերտոր ուժեղարարներ, գումարիչ, ինտեգրատոր, դիֆերենցատոր, ինտեգրատոր, ընտրողական ուժեղարար: Ելքային լարման և ուժեղացման գործակիցի հաշվարկ: Անալոգային բանալիներ: Շմիդտի տրիգեր: Օպերացիոն ուժեղարարներով կառուցված էլեկտրական ազդանշանների գներատորներ:

Թեմա 8. Երկրորդային էլեկտրասնուցման աղբյուրներ: Սնուցման աղբյուրների ֆունկցիոնալ տարրեր. փոփոխական լարման ձևափոխում, հաստատուն հոսանքի պարամետրական կայունարարներ: Հաստատուն լարման գծային կայունարարներ: Դասակարգումը: Հաստատուն լարման բանալիային կայունարարներ: Դեկավարման սարքեր:

Թեմա 9. Էլեկտրոնային տեխնիկայի թվային սարքեր: Թվային և իմպուլսային տեխնիկայի հիմունքներ: Ինֆորմացիայի ներկայացումը: Տրամաբանության հիմնական հասկացություններ: Ինտեգրալ տեսքով թվային տրամաբանական տարրեր: Հիմնական տրամաբանական տարրեր, պայմանական նշանակումներ, անցումային աղյուսակներ: Տրամաբանական տարրերի աշխատանքները, դիողային տրամաբանության, TTL, KMOP տրամաբանության վիճակներ: Սինխրոն և ասինխրոն տրիգերներ: Տեսական բնութագրերը: Էլեկտրոնային սարքավորումներ, կոմբինացիոն սխեմաներ, հաշվիչներ և ռեգիստրներ, դասակարգումները, հիմնական տիպերը: Իմպուլսային ազդանշանների ռեժիմով աշխատող էլեկտրոնային սարքերին ներկայացվող պահանջները: Թվա-անալոգային ձևափոխիչ /ԹԱԶ/ և անալոգա-թվային ձևափոխիչ /ԱԹԶ/: Սկզբունքային կառուցվածքը: Ինտեգրալ ԱԹԶ և ԹԱԶ չիպեր և նրանց սխեմատեխնիկական տարրերը: ԱԹԶ/ԹԱԶ միակցումը օբյեկտի հետ:

Թեմա 10. Սենսորներ և տվիչներ: Հիմնական հասկացություններ և սահմանումներ: Ձգայուն/տվիչային/ տարրեր: Տվիչների չափիչ սխեմաներ: Չափող ուժեղարարներ: Ինֆորմացիոն համակարգերի տարրերը: Ռոբոտատեխնիկական, մեխատրոնիկական և սենսորների, տվիչների վրա հիմնված տեղեկատվական համակարգեր: Տեղեկատվական համակարգերի կենսաչափական հիմնադրությունները: Տեղեկատվական համակարգերի տվիչների մասին ընդհանուր տեղեկություններ: Տվիչների բնութագրերը, չափումների պրոցեսը, ինֆորմացիոն մոդելից կախված չափումների որակի գնահատականները, սխալանքների հաշվառումը և կոմպենսացիան: Դիրքային տվիչներ. ռեգիստրի տիպի դիրքի և տեղաշարժման կինեստատիկ տվիչներ: Էլեկտրամագնիսական կինեստատիկ տվիչներ: Դիրքային ֆոտոէլեկտրական տվիչներ: Արագության և դինամիկ մեծությունների չափումներ /հաստատուն և փոփոխական հոսանքների տախոգներատորներ/: Դինամիկ մեծությունների և արագության տվիչներ. պլեզոէլեկտրական, ճկուն

մագնիսական, էլեկտրաստատիկ, էլեկտրամագնիսական:

Թեմա 11. Լոկացիոն /տեղորոշող/ ինֆորմացիոն համակարգեր: Լոկացիայի տեսական հիմունքները: Էլեկտրամագնիսական լոկացիոն համակարգեր: Ակուստիկ լոկացիոն համակարգեր:

Թեմա 12. Տեխնիկական պատկերային համակարգեր: Պատկերի ձևավորման և հաղորդման սկզբունքներ: Պատկերի տվիչներ (վիդեոկոններ, հեռախցիկներ, տարբեր տիպի հեռախցիկներ): Պատկերի մուտք/ելքի սարքեր: Պատկերների պահելու ֆորմատներ: Պատկերի մշակման բազային ալգորիթմներ: Պատկերների ճանաչողություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Хоровиц П. Хилл У - Искусство схемотехники, Пер. с англ.-М.Издательство, 2014.
2. Миловзоров О. В. Электроника [Текст] : учебник для бакалавров / О. В. Миловзоров, И. Г. Панков. - 5-е изд., перераб. и доп. - Москва : Юрайт, 2013. - 407 с. : ил. - Библиогр.: с. 406. - Прил.: с. 385-392. - Гриф МО. - В пер. - ISBN 978-5-9916-2541-8.
3. Марченко А. Л. Лабораторный практикум по электротехнике и электронике в среде Multisim [Электронный ресурс]: учебное пособие для вузов / А. Л. Марченко, С. В. Освальд. - Москва: ДМК Пресс, 2010. - 448 с.: ил. - ISBN 978-5-94074-593-8. - Режим до-ступа: <http://e.lanbook.com/view/book/897/> .
4. Ермуратский П.В. Электротехника и электроника [Электронный ресурс]: / П. В. Ермурат-ский, Г. П. Лычкина, Ю. Б.Минкин. - Москва: ДМК Пресс, 2011. - 417 с.: ил. - ISBN 978-5-94074-688-1. - Режим доступа: <http://e.lanbook.com/view/book/908/> .
5. Бабичев Ю. Е. Электротехника и электроника. Ч.1. Электрические, электронные и магнит-ные цепи [Электронный ресурс]: / Ю. Е. Бабичев. - Москва : Горная книга, 2007. - 615 с. - ISBN 978-5-91003021-7. - Режим доступа: <http://e.lanbook.com/view/book/3300/> .
6. Душин А. Н. Электротехника и электроника. Электроника [Электронный ресурс] : / А. Н. Душин, М. С. Анисимова, И. С.Попова. - Москва : Изд-во Дом МИСиС, 2012. - 107 с.: ил. - Режим доступа: <http://e.lanbook.com/view/book/47474/>.
7. Лаврентьев Б. Ф. Схемотехника электронных средств [Текст]: учебное пособие / Б. Ф. Лав-рентьев. - Москва: Академия, 2010. - 335 с.
8. Угрюмов Е. П. Цифровая схемотехника [Электронный ресурс] : учебное пособие для вузов / Е. П. Угрюмов. - 3-е изд., перераб. и доп. - Санкт-Петербург: БХВ-Петербург, 2010. - 809 с.: ил. - ISBN 978-5-9775-0162-0. - Режим доступа: <http://znanium.com/bookread.php?book=350426>
9. Лехин С. Н. Схемотехника ЭВМ [Электронный ресурс] / С. Н. Лехин. - Санкт-Петербург: БХВ-Петербург, 2010. - 663 с.: ил. - (Учебная литература для вузов). - ISBN 978-5-9775-0353-2. - Режим доступа: <http://znanium.com/bookread.php?book=350620> .
10. Титце У. Полупроводниковая схемотехника [Электронный ресурс] / У. Титце, К. Шенк. - Москва: ДМК Пресс, 2003. - Т. 1. - 829 с. - ISBN 978-5941202003. - Режим доступа: <http://www.bibliorossica.com/book.html?currBookId=5487>.
11. Титце У. Полупроводниковая схемотехника [Электронный ресурс] / У. Титце, К. Шенк.. - Москва: ДМК Пресс, 2003. - Т. 2. - 943 с. - ISBN 978-5941202010. - Режим доступа: <http://www.bibliorossica.com/book.html?currBookId=5488>
12. Мазин, В. Д. Датчики автоматических систем. Сборник задач : учебное пособие / В. Д. Мазин. — Санкт-Петербург : Санкт-Петербургский политехнический университет Петра Великого, 2017. — 36 с *Режим доступа:* <http://www.iprbookshop.ru/83296.html>
13. Шебалкова, Л. В. Микроволновые и ультразвуковые сенсоры : учебное пособие / Л. В. Шебалкова, В. Н. Легкий, В. Б. Ромодин ; под редакцией В. Н. Легкий. — Новосибирск : Новосибирский государственный технический университет, 2015. — 172 с. *Режим доступа:* <http://www.iprbookshop.ru/45108.html>
14. Войтович, И. Д. Интеллектуальные сенсоры : учебное пособие / И. Д. Войтович, В. М. Корсунский. — 3-е изд. — Москва, Саратов : Интернет-Университет Информационных Технологий (ИНТУИТ), Ай Пи Ар Медиа, 2020. — 1163 с. *Режим доступа:* <http://www.iprbookshop.ru/89436.html>
15. ДОПОЛНИТЕЛЬНАЯ ЛИТЕРАТУРА
16. Подураев Ю.В. Мехатроника. Основы, методы, применение [Электронный ресурс]: учебник/ Подураев Ю.В.— Электрон. текстовые данные.— М.: Машиностроение, 2007.— 256 с. *Режим доступа:* <http://www.iprbookshop.ru/5207.html>
17. Рафаэл Гонсалес Цифровая обработка изображений [Электронный ресурс]/ Рафаэл Гонсалес, Ричард Вудс— Электрон. текстовые данные.— М.: Техносфера, 2012.— 1104 с. *Режим доступа:* <http://www.iprbookshop.ru/26905.html>
18. Артемьев, В. М. Обработка изображений в пассивных обзорно-поисковых оптико-электронных системах [Электронный ресурс] : учебное пособие / Артемьев В.М. ; Наумов А.О., Кохан Л.Л. – Москва, Белорусская наука, 2014. - 116 с. <http://www.studentlibrary.ru/book/ISBN9789850816573.html>

1. 0104/Բ 22	2. Ռոբոտատեխնիկայի հիմունքներ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/0/15	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց եզրամիակիչ գնահատման	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից միկրոէլեկտրոնային և համակարգչային տեխնոլոգիաների վրա հիմնված ռոբոտատեխնիկական համակարգերի կառուցվածքին, ծանոթացնել ռոբոտատեխնիկական համակարգերի նախագծման սկզբունքներին, ներկայացնել նրանց տարբեր մոդելներ, սովորեցնել վերլուծել գոյություն ունեցող ռոբոտատեխնիկական համակարգերը և այլն: Ուսանողներին ծանոթացնել ռոբոտների շարժաբեքներին, դրանց ապարատաճրագրային գոյություն ունեցող համակարգերին:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու ռոբոտատեխնիկայի հիմնական ուղղությունները, 2. սահմանելու և բացատրելու ռոբոտաշինության հիմնական եզրույթները, 3. ներկայացնելու ռոբոտաշինության հիմնական ոլորտները, 4. բացատրելու ռոբոտների կիրառման կանոնները, նշելու «խելացի» մեքենաների կողմից հնարավոր վտանգները և դրանց նվազեցման ուղիները, 5. ներկայացնելու ռոբոտների տեսակները, դրանց խմբերը, դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. նախագծելու կամ նկարագրելու ինքնուրույն գործող ավտոմատ մեքենա, 2. նախագծելու ռոբոտացված տեխնոլոգիական համակարգեր, մշակելու դրանց առանձին տարրերը, համակարգում կիրառելու տարբեր տեսակի տվիչներ, բաշխիչներ և այլն, 3. մշակելու ծրագրեր ծրագրային ղեկավարվող ռոբոտների համար, 4. մշակելու տվիչներից ստացվող տվյալները և գրելու կառավարող ծրագրեր, գ. քնդիանքական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու էլեկտրոնային տեխնիկական փաստաթղթերի և ռեսուրսների հետ:		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Ա6.Նկարագրելու ռոբոտատեխնիկական և ավտոմատ կառավարման համակարգերի հիմքերը, կիրառելու CI/CD, DevOps և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև վերլուծելու ծրագրային համակարգերի մշակման կյանքի ցիկլը և շուկայական ցուցանիշները: Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, կիրառելու արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումներ, մշակելու օպտիմալ և նորարարական ծրագրային համակարգեր: Բ4.Իրականացնելու մասնագիտական և միջառարկայական հետազոտություններ, կիրառելու առաջադեմ տեխնոլոգիաներ և AI գործիքներ, նախագծելու և մշակելու գիտական հիմքով ծրագրային համակարգեր: Բ6.Նախագծելու և զարգացնելու պահանջարկ ունեցող ծրագրային համակարգեր, կիրառելու DevOps, CI/CD և ամպային տեխնոլոգիաներ, ինչպես նաև մշակելու ավտոմատացված, ռոբոտատեխնիկական և AI/LLM հիմնված լուծումներ՝ հաշվի առնելով շուկայի պահանջներն ու արդյունավետության ցուցանիշները: Գ2.Մայրենի և ռբև օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում: Գ4.Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5.Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:		
11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. քննարկում /բանավեճ 2. համագործակցային աշխատանք 3. մտազրոհ 4. վերլուծական մեթոդ 5. խոսքային կամ բանավոր մեթոդ 6. գրավոր մեթոդ		

7. բացատրական մեթոդ:
12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Առանց եզրափակիչ գնահատման մոդուլ՝ առավելագույնը 20 (4+5+8+3) միավոր: 1-ին ընթացիկ քննություն. առավելագույնը 4 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: 2-րդ ընթացիկ քննություն. առավելագույնը 5 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: Ընթացիկ ստուգումներ. առավելագույնը 8 միավոր: Գնահատման միավորի քայլը 0,5 է: Մասնակցություն. առավելագույնը 3 միավոր:
13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ռոբոտատեխնիկայի զարգացման պատմությունը, խնդիրները: Թեմա 2. Ռոբոտների հիմնական կառուցվածքը: Թեմա 3. Ռոբոտների շարժաբեքները և սնուցման միջոցները: Թեմա 4. Ռոբոտների կառավարման միջոցներ և համակարգեր: Թեմա 5. Ռոբոտների շարժունակությունը (դինամիկան) և մեխատրոնիկա: Թեմա 6. Ռոբոտատեխնիկայի նախագծման միջոցներ: Թեմա 7. Ռոբոտների կիրառությունները: Թեմա 8. Ռոբոտատեխնիկական համալիրներ:
14. Հիմնական գրականության ցանկ. - Ավետիսյան Բ.Ա., Փոթիկյան Մ.Գ., Մեխատրոնային և ռոբոտատեխնիկական համակարգերում կառուցվածքային սխեմաների նախագծման ապարատաճրագրային միջոցների կիրառման առանձնահատկությունները: Ոսումնական ձեռնարկ, Երևան, ԿԶՆԱԿ, 2023. - Introduction to Robotics, https://see.stanford.edu/course/cs223a - Ступина Е.Е., Ступин А.А., Чупин Д.Ю., Каменев Р.В. Основы робототехники: учебное пособие. — Новосибирск: Агентство «Сибпринт», 2019. — 160 с. - Е.И.Юревич. Основы робототехники. Лекции. - Роботы и робототехнические устройства. Онтологии робототехники. Понятия и отношения, описывающие функциональность и поведение. Издание официальное, Москва, Российский институт стандартизации, 2023.

ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ-3-ԹԱ

1. 0104/Բ 28	2. Համակարգերի անվտանգություն /ՀԲ	3. 9 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 30/30/30	
6. 6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել. - համացանցի ստանդարտներն ու կառուցվածքը, համացանցի ստեղծման պատմությունն ու զարգացման փուլերը և կիրառվող արդի տեխնոլոգիաները, - համացանցում առկա խոցելիությունների տեսակները, դրանց հայտնաբերման և վերացման մեխանիզմները, - համակարգչային ցանցերի անվտանգության հիմնախնդիրները, ներառյալ հարձակումների տեսակներն ու դրանց հայտնաբերման և վերացման մեթոդները, - ցանցերով ուղարկվող տվյալների գաղտնագրման տարբերակները, - նույնականացման և էլ. ստորագրության կիրառությունը, - անվտանգ ցանցերի ճարտարապետությունն ու արդի ծրագրային և սարքային կիրառումները:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. ա. մասնագիտական գիտելիք և իմացություն - ներկայացնելու համակարգչային ցանցերի ստանդարտներն ու կառուցվածքը, - ներկայացնելու համացանցի ստեղծման պատմությունն ու փուլերը, - ներկայացնելու համացանցում կիրառվող արդի ծրագրային լուծումները, - տարբերելու համացանցում առկա խոցելիությունների տեսակները, դրանց հայտնաբերման և վերացման մեխանիզմները, - ներկայացնելու համակարգչային ցանցերի անվտանգության հիմնախնդիրները, ներառյալ հարձակումների տեսակներն ու դրանց հայտնաբերման և վերացման մեթոդները, - տարբերելու ցանցով ուղարկվող տվյալների գաղտնագրման տեսակները, - ներկայացնելու նույնականացման և էլ. ստորագրության անհրաժեշտությունն ու դրանց հետ կապված անվտանգային խնդիրները, - ներկայացնելու անվտանգ ցանցերի ճարտարապետության դրույթներն ու արդի ծրագրային և սարքային կիրառումները,		

բ. գործնական մասնագիտական կարողություններ - կիրառելու ստացած նախնական գիտելիքները համակարգչային ցանցին միացված սարքերից և համակարգերից անվտանգ օգտվելու համար, - կիրառելու անվտանգության կանոններն ու միջոցառումները իր կողմից ստեղծվող համացանցային համակարգերում, - նախագծելու միջին բարդության անվտանգ համակարգչային ցանցեր, - տեխնիկապես նկարագրելու համակարգչային ցանցի ճարտարապետությունը, - իրականացնելու իր ենթակայության տակ եղած ցանցերի հետևողական ստուգումն ու թարմացումները, - ստուգելու, հայտնաբերելու և վերացնելու իր ենթակայության տակ եղած ցանցերի խոցելիությունները, գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ - անվտանգ օգտվելու համացանցում գործող սարքերից և համակարգերից, - անվտանգ օգտվելու համակարգչային և լուրջ ցանցերից և՛ որպես օգտվող, և՛ որպես նախագծող:
